

ԵՐԶԻՐԱԾՎԱՆ

15285



ՊՈՒՇԿԻՆ
ՅԵՎ.
ԱՐԵՎԵԼՔ

891.71.092

Դ - 97 թ

Վ. ԹԵՐՁԻՒՄԱՆՑԱՆ

25 NOV 2010

891.71-092 ԿԿ.

Դ-97թ

52

ՊՈՒՏՃԿԻՆ
ՅԵՎ
ԱՐԵՎԵԼՔ

Պուտճկինը հայ գրականուրյան մեջ

ԹԵՍԴՐԱԾ

ՅԵՐԵՎԱՆ

1937

18 ADD 902
1910 VUL 63

15285

I

Պուշկինի հանճարի համապարփակ բնույթը, նրա ստեղծագործության բազմակողմանի ընդգրկումը նըշել և տակավին անցյալ դարի 40-ական թվերին ոռու մեծագույն քննադատ թելինսկին։ Ահա ինչ և գրում նա իր նշանագործ հոգվածներում,

«Մենք արդեն խոսեցինք Պուշկինի պոեզիայի բազմազանության, նրա զարմանալի ընդունակության մասին՝ հեշտությամբ և ազատորեն տեղափոխվելու կյանքի ամենահակադիր վորորտները։ Այս տեսակետից, անկախ բովանդակության մտածողական խորությունից, Պուշկինը հիշեցնում է Շեքսպիրին։ Անթոլոգիական մեսի սքանչելագույն կտորներ, վորոնք գրոշմված են ին հին հելլենական մուսայի վոգով, նմանություններ զուրանին, վորոնք լիսվին տալիս են խալմիզմի վոդին և արաբական պոեզիայի գեղեցկությունները—շողջողուն աղամանդ են Պուշկինի պոետական պատկի մեջ։ «Արյանս մեջ վառվում ե ցանկության «ուրը», «Թրոջս պարտեզը», «Մարգարեն» և մի մեծ բանաստեղծություն, մի տեսակ պոեմ, վորը լի յե իսոր խմաստով և կոչվում ե «Հատված» ներկայացնում են այլ բնույթի և բարձրագույն տեսակի արևելյան պոեզիայի գեղեցկությունները, և պատկանում են Պուշկինյան պլրոտեգ-հանճարի մեծագույն յերկերին»*):

Այնուհետև Յելլինսկին հիշատակում ե Պուշկինի բուն սուսական—ժողովրդական վոգով համակված բանաստեղծությունները, «Արևմտյան ոլա-

*.) Գ. Թելինսկի «Ա. Ս. Պուշկինը, հոգված V.



3609
38

ПУШКИН
И
ВОСТОК

Госиздат,

Ереван,

1937 г.

վոնների յերգերը», վորոնք անհայտապելի փայլով տաշիս հն տվյալ յերկրի և բնության կոլորիտը:

«Նմանություն Դանտեյին»,—զրում ե Բելինսկին,—կարելի յե համարել հատվածային թարգմանություններ «Աստվածային կատակերգություններ», և նրանք այդ պոեմի մասին տվելի լավ և ավելի ճիշտ գաղափար են տալիս, քան մինչև այժմ ոռուերեն լիզվով կատարված բոլոր թարգմանությունները՝ չափածո, թե արձակ: «Պոեմի սկզբը» («Դյավուրներն այժմ գովարանում են Ստամբուլը»*) կարծես թե զրել ե մեր ժամանակի մի թուրք... ինչպիսի բարդապանություն, ինչպիսի հարստություն...»:

Տեղ իրոք, Պուշկինի հանճարը ստեղծագործության աղբյուր ե վորոնում մերթ Մերձավոր Արեվելքի յերկրներում: Արարիայում, Պաղեստինում, Յեղիպտոսում («Յեգիպտական գիշերներ»), մերթ միջնադարյան Յեվրոպայում («Ժլատ Ասպետ», «Տեսարաններ ասպետական ժամանակներից»), մերթ Խոպանիայում («Քարե հյուրը» և այլ բանաստեղծություններ), Ֆըրանսիայում, Իտալիայում և այլն, և այլն:

Սակայն առանձնապես պետք ե նշել Կովկասի նշանակությունը Պուշկինի ստեղծագործության առաջին շրջանի համար: Իր յերիտասարդական ամենաբուռն տարիների խոյանքները Պուշկինը նվիրել ե Կովկասյան վեհապան լիոներին: «Կովկասը յեղել ե Պուշկինի պոեզիայի որբանը,—զրում ե Բելինսկին,— ինչպես հետո դարձավ Լերմոնտովի պոեզիայի որբանը»:

*) Տե՛ս «Ճանապարհորդություն դեպի Երզրում»:

Պուշկինի «Վտարանդի քնարը» նրա յերկրորդ մեծ պոեմի՝ «Կովկասյան գերիք»-ի մեջ նույնը իրունիաց յով խարծանում ե ցարական նվաճող բանակի գործած գամբան տվերածությունները: Պոեմի վերջարանաւում, դիմելով Կովկասը նվաճող ցարական գեներալներին, Պուշկինն ի միջիայլոց առում ե.

Թեղ եմ յերգում, հերոս,
Ով Կոտայքեցսկի, Կովկասի
պատուհաս—
Ուր վոր սլացար ահասաստ—
Թո յերթը, ինչպիս սև ժանտախտ,
Կործանեց, ջնջեց ցեղեր...»

Պուշկինի ազտոտահնչ վոգին, նրա մուսան «Թոշում եր դեպի սահմաններն Ասիայի և իր պատեկի համար քաղում վայրի ծաղիկներ» («Կովկասյան գերիք»՝ վերջարան): Լեռների աղջիկը յերգում եր նրա համար: «Յերանիկ Վրաստանի յերգերը»:

Տարիներ անց Պուշկինը հիշում ե նույն աղջկան, յերբ մի այլ գեղեցկուհի նրա համար յերգում եր այս անգամ «Տիուր Վրաստանի յերգերը»:

Մի յերգիր, գեղուհի, ինձ մոտ
Յերգերը տխուր Վրաստանի,
Հիշեցնում են նրանք ինձ
Ռւրիշ կյանք և ափ հեռավոր...

1820 թվի ամառը Պուշկինը մի քանի ամիս ապրեց հանքային ջրերում Պյատիգորսկում, վորտեղ և

սկսեց գըրել «Կովկասյան գերի» պոեմը, վորի մէջ յերգում եր այդ իգեալական չերքեղուհուն: 1828 թվին նա ակամա անդրադառնում ե այդ պատկերին, իսկ հաջորդ տարին կարծես մի անդիմագրելի մղումով մեկնում ե դեպի Կովկաս, Թիֆլիս—Երզրում՝ Հայաստանի վրայով:

Ահա Կովկասն իմ վոտքի տակ: Յես մնն-մեն
նակ վերենիում
Սպիտակափառ լեռան լանջին լուս կանգնած եմ
ու նայուի,
Ինձ պես բարձր, արծիջն հեռվում, դեպի յեթեր
վերացած՝
Ոդում հանգիստ սալառնում ե՝ թելերն հզոր տա-
րածած:
(Թարգմ. Ա. Ծառուրյան)

Այս և հետագա տողերը Կովկասյան լեռնային բնության հոյակապ պեյզաժն են տալիս: Սակայն դա սոսկ պեյզաժ չե, բանաստեղծության վերջին տու- նը, վոր վերաբերում ե Թերեքին, ստանում ե սիմ- վուական իմաստ:

Յեվ խփվում ե նա ափերին, և տպարդյուն կը-
ոփի տալիս,
Յեվ իր քաղցած ալիքներով ժայռեր լիզում ու
լալիս...
Սակայն իզնւրո նորա համար չկա ուրախ վոչ
մի որ,
Նորան ձնշում ու խեզում են լուս քարափ-
ներն ահավոր:

Այս տողերի այլաբանական իմաստն ել ավելի ակներեվ ե, յեթե նկատի ունենանք, վոր Պուշկինի ձեռագրում կան հետեւյալ չորս տողերը, վորոնք դուրս են մնացել տպագրված տեքստից՝ շատ հասկա- նալի պատճառով:

Так буйную волюность законы теснят,
Так дикое племя под властью тоскует,
Так ныне безмолвный Кавказ нефодует,
Так чуждые силы его тяготят...

Այսպիս են՝ կաշկանդում որենքներն աղատու-
թյունը խիզախ,
Այսպիս և հեծեծում վայրի ցեղը իշխանու-
թյան լծի տակ,
Այսպիս և հիմա անմռունչ Կովկասն այրվում
ցասումով,
Այսպիս են ահա նրան ձնշում ուժերը ոտար:

* *

1829 թվին կատարած ճանապարհորդության մաս- սին Պուշկինը գրեց իր նշանավոր ուղեղբությունը, վոլ լուս տեսավ միայն 1836 թվին: 1829 թվի ամա- ռուա կրկին ուղեղիորվեց դեպի Կովկասի հանքալին ջրելու Այդ ժամանակ արդեն սկսված եր ոռւս-թուր- քական պատերազմը և ոռւսական բանակն արշավում եր ըզրումի վրա: Պուշկինն ոգտվելով առիթից, — ինչեւ գրում ե ինքը գրքի առաջարանի նախա- զօն, վոր վորոշ նկատառումներով ժամանակին չի տպարվել, — մեկնեց Թիֆլիս՝ տեսնելու իր յեղբորը

և իր մի քա՞ի բարեկամներին։ Սակայն նրանք բառնակի հետ միասին մեկնել եյին ուղմանակատ։ Պուշկինը շատ պահանջում էր միանալու նրանց և ականատես յեղավ Երզրումի գրավմանը։ Ժամանակի թերթերը հիմանափակեցին, յերբ բանաստեղծը վերադառնալով պատերազմից, ներբողներ չգրեց՝ ցարական բանակի հաջողություններին նվիրված, և սկսեցին կշամբել Պուշկինին։ «Յետ պարտավոր չելի, անշուշտ, գրուուալ, պատերազմից, ներբողներ պատվերով, ասում են Պուշկինը—... ներօշում վարուելը միշտ ինձ թվացել և ծիծաղելի և անհեթեթ քմահաճույք»։ Պուշկինը ներշնչման աղջյուր չեր կարող կտնել ցարական բանակի հաջողությունների մեջ ։ Այ յերբեք չի յեղել ստատական բանաստեղծ և ներբողուկագիր։ Ճիշտ եւ առ ընդունում եր սուսական բանակի «Փայլուն հաղթանակները», երզրումի հման անառիկ մի բերդաքաղաքի գրավումը, թեև առանց վորոն գիմագրության հանդիպական ըայց վոչ իր ուղեգրության մեջ և վոչ ել այդ շըջանի իր բանաստեղծություններում նա ոչ մի անգամ չի փառաբանել այդ հաջողություններ, ուույնիսկ կարելի յետ ասել հակառակը։ Պուշկինը իր նիստական վորոշ շեշտ եր մացնում իր ճանապարհորդական և ուղմական նկարագրությունների մեջ։ Նա այդպիսի հետաքրքրական մի եպիգոդ։

«Հեծելազորի յելույթից առաջ մեր բանակը եւ կան մի քանի լեռնաբնակ հայեր, պահանջելով իրնց պաշտպանել թուրքերից, վորոնք յերեք որ առաջ ըշշել եյին իրենց տապարը։ Դնդապետ Անրեալը լավ ըլլի չընկնելով, թե ինչ են ուղում նրանք, յերեատյեց, թե թուրքական ջոկատը գտնվում են լեռներւմ,

և ուղանների*) մի եսկադրոնով արշավեց այդ կողմը, եւ մացնելով Ռայեվսկուն, թե 3000 թուրքեր գտնվում են գարերում։ Ռայեվսկին ուղեվորվեց նրա հետեւց, վորապեսդի վատանդի գեղագում ողնի նրան։ Յս ինձ համարում եյի գործուղված Նիժեգորոդյան գնդում և մեծ սրաննեղությամբ ձիս քշեցի հայերին» ազատելու։ Անցնելով 20 վերստ, հասանք մի գյուղ և ահսանք մի քանի հետ մնացած ուղաններից, վորոնք ձինելով, մերկ թրերով հալածում եյին մի քանի հավմբիր։ Գյուղացիներից մեկը բացատրեց Ռայեվսկուն, վոր խորքը վերաբերում են 3000 յիշների, վորոնց յերեք որ առաջ քշել եյին թուրքերը և վորոնց հետեւց կարելի յետ համնել յերեք որից Ռայեվսկին հրամայեց գաղարիցնել հավերի հետապնդումը և հրաման ուղարկեց գնդապետ Անրեալին վերագառնալ։ Մենք հետ գնացինք և դուրս գալով լիուներից, հասանք Հասան-Կալայի մոտ։ Բայց այսպիսով 40 վերստ պտույտ կատարուցինք, վորապեսդի ակատենք մի քանի հայկական հավերի կյանքը, ինչ վոր ամենեվին գվարձալի չժվաց ինձ»**).

Պուշկինի այս ճանապարհորդության մասին խոսմել ենակ մի ֆրանսիացի, վոր 1834 թվին Փարիզում հրատարակել եր մի գիրք Արեվելքում կատարած իր ճանապարհորդությունների մասին։ Փրանսիացի հեղինակը (հյուպատոս Ֆոնտանիյե) եր գրքում ի միջի այլց գրում եւ.

«Իր հարուստ յերեվակայությումը ականավոր մի բանաստեղծ իր տեսած փառավոր սխրագործու-

*) Առուսական հին բանակի հեծյալ զինվորները։

**) Տես «Ճանապարհորդություն դեպի երզրում» գլ. 4-ըդ։

թյունների, մեջ գտել և վոչ թե պոեմի, այլ սատիրացի նյութ»: Այսուղի խոսքը փերաբերում եր Պուշկինին, ինչպես նկատում ե ինքը՝ բանաստեղծը, վորովհետեւ նույն գրքի մեջ մի այլ տեղ ֆրանսիացի հեղինակը գրում է. «Եշխան Պատկելիչի բանակի հրամանատարների մեջ աչքի ելին ընկնում գեներալ Մուռավայնվը... Վրացի իշխան Զիշեվաձեն... հայ-իշխան Բերուտովը... Եշխան Պոտյումկինը, գեներալ Ռայենվուկին և, վերջապես, պլ. Պուշկինը... վորը թողել եր մայրաքաղաքը՝ իր հայրենակիցների քաջազդը ծությունները յերգելու համար»*):

Մենք տեսանք արդին, թե ինչպես և յերգել
մեծ բանաստեղծն այդ «քաջազործությունները»։ Սա-
կայն դժվար ե տաել, թե ինչ ե ակնարկում Քրան-
սիացի հեղինակը, գրելով, թե Պուշկինը ստուգայի
(յերգիծանքի) նյութ ե գտել այդ արշավանքի մեջ,
քանի մոր Պուշկինի ուղեգրությունը լույս և տեսել
1836 թ., Ֆանտանիեյի գրքից իրկու տարի անց։
Պուշկինիստները տարբեր բացատրություններ են տա-
լիս Քրանսիացու այս ակնարկությանը։ Պուշկինը իր
նախարանում կարականապես առարկում է Քրանսիա-
ցու այդ գիտողության գիմ և ասում է, վոր ինքն ամե-
նավին մտադիր չի յեղել ստուդիաներ գրել Պասկեվի-
չի մասին, բայց այնուամենայնիվ Պուշկինը նույն
առաջաբանն նախագծում գրում է. «Չեք կարելի, որի-
նակ, թերթերում տպել մենք հույս ունենինք, թե
այսին պ, պրոպորցիկն արշավանքից կվերադառնա-
ֆելորդյան խաչով, մինչդեռ գրա փոխարեն նա Մոլ-

*) «Ճանապարհորդություն դեպի Երդրում», առաջաբան

դավիթյից բերեց միայն ջերմախտ: Ակնհայտ է, վոր ցենզուրան այդ չեր թուլլատրի»:

Գրաքննությունը և ցարական ժանդարմերիայի
պետ Բհնկենդորֆն աշախուրջ հետեւում ելին Պուշկին
նին և նրա ամեն մի առղյա անցնում եր նրանց գրա-
քննության բովով։ Պուշկինի ճամապարհորդությունը
մեծ դժոնություն պատճառեց Նիկոլայ Ա-ինին և
Բհնկենդորֆին։

Յեկ իրոք, վերադառնալով Կովկասյան լեռներից իր հայրենի տափաստանները, Պուշկինը իր հետ չբերեց վոչ մի ներբողական բանաստեղծություն կամ պուեմ՝ նվիրված Երգումի գրավմանը և ոռուսական բանակի հաղթանակին. գրա փոխարեն նաև տպագրեց «Կովկաս» բանաստեղծությունը (1829 թվի սեպտեմբերի 20-ին), վորի հետ մենք արդեն ծանոթացանք, և մի քանի այլ բանաստեղծություններ («Հայ Փիզից», «Դելիբաշ» և «Ուեգի վահանը»), վորոնք այս կամ այն չափով կապված են 1829 թ. ոռուս-թուրքական պատերազմի հետ. Այս բանաստեղծություններից առանձնապես՝ աչքի յե ընկնում «Հաֆիզից» վերնագրված կտորը, վորի մասին հիացմունքով և խոսում թելիսսկին: Այս բանաստեղծությունը, վոր միանգամայն ինքնուրույն և և իր կոլորիթով միայն հիշեցնում և պարսկական կասիկ պղեղիան, նվիրված և այդ ժամանակ ոռուսական բանակի հետ միասին թուրքական գորքերի գեմ կովող Հարաբաղյան հեծելազորքի հրամանատարներից մեկին՝ Ֆահրադ բեկին: Պուշկինի այդ բանաստեղծության մեջ լիովին բացակայում ե ոազմական վորեե տրամադրություն, ընդհակառակը, բանաստեղծության պահանջման վերաբերյալ հերոսին, չքնաղ յերի-

տասարգին, վորպեսզի նա «չգերվի ռազմի փառքով», վորովնեսմ ճակատամարտների թոհութոնի մեջ նա կարող ե կորցնել «իր շարժումների ամոթիսած նրբությունը և շնորհագությունը»։ Սա զարմանալիորեն նման է հաֆիզյան լիրիկայի նըբագեղ վոդուն և իզուր չե, վոր վերնազրիած և յեղել «Հաֆիզից», թեև առանց վորեն կապ ունենալու իրանական այդ նուրբ լիրիկի հետ։

Մեծ արվեստագետ-սլուտը չեր գրում պարունայք ժուրնալիստների պատվերով, նա իր բանաստեղծական նկարչությունը գտնում եր կյանքի բաղմազանության մեջ, ունալիստ-գեղարվեստագետի աշխով նկագում եր պատերազմի ավեր ածությունները, վորոնք նրա մշշի առաջ վոչնչացնում . եյին կյանքի գեղեցկությունը։ «Դելիբաշ» բանաստեղծության մեջ Պուշկինը անհնալասարելի վարպետությամբ մի քանի տողի մեջ նկարագրում է Դելիբաշի (թուրք հածյալի) և ուսու կաղակի մենամարտը, վորի ահավոր վախճանը Պուշկինը տալիս ե հոմերոսյան ուժուվ և եղիկական պարզությամբ։

Այս շրջանում զրած բանաստեղծություններից վորպես քաղաքական բովանդակություն ունեցող յերկ աչքի լե ընկնում «Ալեքի վահանը»։

Ինչպես հայտնի յե, 1829 թ. ոռուս թուրքական պատերազմը վերջացավ Ադրիանուպոլսի հաջողությում։ Այդ ժամանակ ոռուսական բանակը փոքր Ասիայում արդեն դրավել եր Երզրումը և մտել յերկը խորքը՝ բայց մինչեւ Բայրութ, իսկ յեվրոպական Թուրքիայում Բալկանների վրայով հասել եր մինչեւ կ. Պոլսի (Ստամբուլ) գոները։ Պուշկինն իր այս բա-

նաստեղծության մեջ նուրբ ակնարկություն և անում այն մասին, վոր ոռուս բանակը հասնելով Ստամբուլի մոտ, կանգ առավ և ել առաջ չկնաց, վորովնետե Ոլես գի վահանը իրը թե կասեցրեց նրա առաջնազաղացումը։ (Թուր առաջին պատմուկան իշխաններից Ոլեզը 907 թվին արշավել եր Կ. Պոլսի վրա և ըստ ավանդության իր վահանը մեխել «արքայաքաղաքի» գարպասներին ի սարսափ հույսերի)։ Պուշկինը վոչ առանց հեգնանքի հիշում և այս ավանդությունը, ակնհայտ կերպով ակնարկելով Նիկոլա Ֆաղաքական պարտությունը և Անդրիայի հանդիպ, վոր ամեն գնով արգելը եք հանդիսանում ցարի նվաճողական ծրագրութիւնը հագումանը Յնկ մասն Յնկ մուսատանը չնայած իր ռազմական խոշոր հաջողությունն ըին (հերզումի գրավումը, Պոլսի գոների մոտ համնելը), փաստորեն ստանում եք շատ շիշ բան՝ համեմատած Պոլսի նման համաշխարհային նշանակություն ունեցող մի քաղաքի հետ, վորի նվաճումը հանդիսացել ե ոռուս ցարերի դարավոր յերազը։ Պուշկինը զարմանալի նրբությամբ և գեղարվեստական մեծ տակտով մի կ ըն բանաստեղծության մեջ բնութագրում ե ցար-ժանդարմ Նիկոլայ 1-ի քաղաքականությունը, և նուրբ իրոնիայով պաշկագերծ և անում նրան, վորին ատում եր իր ամբողջ հոգով։

Բանաստեղծը քանիցս նշում ե, վոր չի ցանկանում միջամտել ուղմական և քաղաքական խնդիրներին։ «Ճանապարհորդության» առաջաբանում նա գլուխում ե. «Յես չեմ խառնվում ուղմական դատողություններին, այդ իմ գործը չե»։ Բայց Նիկոլայը և նրա արքանյակներն այնքան միամիտ չեյին վոր

Հնկատելին Պուշկինի անաստեղծության թագուն հեղանական իմաստը: Զեր նըանք իրենք զգում եյին իրենց քաղաքական ակներկ պարտությունը կ. Պոլսի գարգառաների առջև ավելի հղոր մի ախոյանի հանդեպ, ինչպես Անգլիան եր:

Ահա մոտավորապես այն ամենը, ինչ Պուշկինը նվիրել եր 1829 թվի պատերազմին, յեթե չհաշվինք «ձանապարհորդություն դեպի Երզրում»-ը, վոր լույս տեսավ հետազում: Այս յերկի առաջաբանում Պուշկինը պատասխանում է այն մարդկանց, վրանք Բենկենդորֆի և իր նժանների թելադրությամբ մեղադրում եյին բանաստեղծին՝ իր հայրենիքի հանդիպ չյերախտամոռ» լինելու համար, քանի վոր նո ներբողներ չեր գրել նվիրված սուսական զենքի հաջողությաններին: Գեղարվեստագետի մեծ վարդետությամբ, որյենիտիվությամբ և հաճախ նուրբ յումորավ պատմելով իր ձանապարհորդությունը, Պուշկինը մի կողմից պըճանագրում եր սուսական բանակի «համարձակ» շարժումը Սողանլուի վրայով, վորով Պասկեվիչը սերասքերին կտրեց Ոսման փաշայից, թշնամու յերկու կորպուսների պարտությունը մի որոժ, արագասլաց արշավը դեպի Երզրում, մյուս կողմից, վորպես ռեսալիստ արվեստագետ նկարագրում եր պատերազմի հետ կապված գդիարությունները, տեղական բարքերն ու սովորությունները, փարատելով արեկելքի ճոխության և հարսության մասին չ զած առասպելները: Ահա ինչ ե գրում նա այդ մասին. Ծիս չգիտեմ մի արտահայտություն, վորն ավելի անիմաստ լիներ, քան ասիսկան ճոխությունն բառերը: Այս առաջը յերեվի ծագել ե խաչակրաց արշավանքի

ժամանակ, յերբ աղքատ ասպետները թողնելով իրենց դղյակների մերկ պատերը և կաղնե փայտե աթոռները, առաջին անգամ տեսան կարմիր գիվաննիր, խայտանկար գորգեր և կոթի վրա գունագեղ քարերով դաշույններ: Հիմա կարելի յե ասել ասիսկան աղքատություն, ասիսկան կեղտոտություն, եւս, բայց ճոխությունն անշուշտ պատականում ի Յեկոպային»*):

II

Պուշկինն առաջին անգամ չեր, վոր տեսնում եր արևելցիներին: Իր յերիտասարդական շրջանում նա մոտ հինգ տարի ապրել եր վորպես աքսորական «պաշտոնյա» Ռուսաստանի հարավում՝ Բեսարաբիայում (Քիշնև), Աղևսայում, Ղրիմում: Բայրոնի պոեմների ռումանական արեվելքը մի պահ վոգեվորել եր նըան, գնչունների թափառական կյանքը, Ղրիմի խաների պալատների մավրիտանական ճարտարապետությունը, հարենմի գաղտնիքները, «Հազար և մեկ գիշերներ» հեքիաթները, արաբական և պարսկական պոեզիան տվել եյին նըան բանաստեղծական սքանչելի ներշնչումներ, վորոնք մարմացել են «Բախչիսարայի շատրվանի», «Գնչունների», «Ճար Սալտանի հեքիաթի» և մի շարք լիքիկական բանաստեղծությունների մեջ: Սական «իսկական» Արևելքը նագեռ չեր տեսիլ: Ահա թե ինչու նա շտապում եր անցնել Արքաչայը, վոր այդ ժամանակ Ռուսաստանի և Թուրքիայի ասհմանն եր: Նա միշտ յերագել եր ար-

*) «Ճանապարհորդություն դեպի Երզրում», վլուխ 5:

տասսահման գնալու մասին, քանիցս դիմել եր ցարին արտասահման անցնելու արտօնություն ստանալու համար, բայց միշտ ել մերժում ստացել նույնիսկ փորձել եր մի քանի անգամ դադունի կերպով փախչել, սակայն ապարդյուն: «Ճանապարհորդության» մեջ Պուշկինը գրում ե. «Յես գետն անցա անբացատրելի մի զգացմունքով: Յես զեռ յերբեք չեյի տեսել ոտարի հողը: Սահմանն ինձ համար ուներ ինչ վոր խորհըլութայր բան, մանուկ հասակից ճանապարհորդությունը յեղել եր իմ սիրելի յերազը: Այնուհետեւ յես յերկար ժամանակ աստանդական կյանք եմ վարեք շրջելով մերթ Հարավում, մերթ Հյուսիսում, բայց զեռ յերբեք զուրս չեյի պրծել անծայրածիր Ռուսաստանի սահմաններից: Յես ուրախ զվարթ անցա նվիրական գետը և ձիս ինձ հանեց թուրքական ափը: Սակայն այդ ափն արդեն նվաճված եր, — ավելացնում ե Պուշկինը թագուն տիրությամբ, — յես զեռես գտնը վում եյի Ռուսաստանում:

Յեկ այսպես, նրա նվիրական յերազն այս անգամ ել չիր սգործվեց, Նիկոլայ 1-ը նրան ամուր եր պահել իր ճանկերում: Ճշմարիտ ե, նա տեսավ ասիական մեծ քաղաք՝ Երզրումը, նույնպես նվաճված, սուկայն հերիաթային վոչինչ չկար այդ արեվելքում, նա նույնիսկ կարողացավ մուտք գործել փաշայի հարեմը, սակայն այնտեղ ել վոչինչ չգտավ հեքիաթային, փաշայի կանանց մեջ «չկար վոչ մի գեղեցկուհի», — գըրթում ե նա հիսաթափված:

Այնինչ այդ ժամանակ Երզրումում սկսվել եր ժամանակար, վորն արդեն տարածվել եր նաև Անդրբկովկասում: Ալդ մասին Պուշկինը պատմում ե բնու-

րոշ մի եպիզոդ, վոր նրան պատահել ե Հայաստանում Բղովդալի (Դվալի) լեռնացքից իջնելուց հետո՝ կոռուց Գյումրի գնալու ժամանակ: Հետաքրքրության համար ցիտատը բերում ենք «Ճանապարհորդությունը գեպի Երզրում»-ի հայերեն մի հին թարգմանությունից*):

«Լեռն անցնելով իջա ի հովիտ հովանավորյածառվք: Հոն հանքային աղբյուր մը տեսա, վոր կը վագեր՝ կերթալ ճամբուն մեկ կողմեն ի մյուսն: Այս տեղ հայոց տերտերոջ հանդիպեցա, վոր Յերեվանա Ախլցխա կերթար:

— «Ի՞նչ նոր բան Յերեվան», — հարցուցի:

— Յերեվանա մեջ ժանտախտ, — պատասխանեց. — «Ի՞նչ կլավի Ախլցխայի վրայոք»: — «Ախլցխայի մեջ ժանտախտ», — պատասխանեցի լիս: Այս տխործելի լուրն իրարու տալով բաժանվեցանք»:

Ճանապարհորդության ամենառուշագրավ դրվագներից մեկն ե Պուշկինի հանդիպումը սպանված Դրիքոյեղովի դադաղին, վոր սայլով բերում եյին Թեհրանից: Պատմական այս տիսուր հանդիպումը տեղի ունեցավ Հայաստանի հողի վրա, յերբ Պուշկինն իջնում եր Բղովդալի լեռնացքից՝ ուղեղորվելով գեպի Գյումրի:

Ռազմաճակատից վերադառնալով, Պուշկինը գըրեց նաև «Թոն» բանաստեղծությունը, վոր խիստ ուշագրավ ե վորպես ապացույց այն բանի, թե ինչ վերա-

*) «Ճանապարհորդություն»-ը քաղվածաբար թարգմանվել է լույս ո տեսել 1883 թ. Վենետիկի «Բազմավառում», թարգմանին ե դրիմցի Ք. Քուշներյանը, ինչպես մեզ նա զողվեց պարզեւ վորովհետեւ թարգմանությունն անստորպիք ե:

բերմունք ուներ բանաստեղծը գեպի պատերազմը: Հակառակ շովինիստորեն տրամադրված ուազմատենչ գրականագետների և «հայրենասեր» ժուլնալիստների: Պուշկինն այդ բանաստեղծության մեջ վողջունում և խաղաղությունը և փաստորեն ժողովուրդների, յեղացրության կոչ և անում:

Լայն դաշտերի մեջ շողալով
Սահում և նա... Բարե, Դոն,
Վորդիներից քո հեռավոր
Բերել եմ յես քեզ վողջույն,

Դոնի վորդիները՝ կազակները հեռու Փոքր Ասիայում անհամբեր սպասում են պատերազմի վախճանին, վորպեսզի վերադառնան հայրենիք, վերսկսելու խաղաղ աշխատանքը և խմելու իրենց այդիների փրփը ըուն զինին: Պուշկինը վողջույն է բերում նրանցից հանգարած Դոնին: Այնուհետև բանաստեղծը վողջունում և Դոնին Արաքսի և Յեփրատի անունից, վորոնք նրա յեղացրներն են.

Յեղացրն ես դու հոչակավոր
Այն գետերի, հանդարս Դոն,
Արաքս գետից և Յեփրատից
Բերել եմ յես քեզ վողջույն:

Այնուհետև բանաստեղծը պատմում է, թե ինչպես Դոնի վորդիների նժույգները հոգնած յերկարատեղ արշավանքից՝ անցնում են Արփաչայը, զգալով հայրենի հողի մոտիկությունը և խմելով նրա ջուրը՝ շտապում են զեպի հայրենի գետը:

Միանդամայն ակներկ և Պուշկինի ազատախոհ, համաշխատիային մասշտաբ ընդգրկող հայացքը: Գետերն այսեղող դառնում են սիմվոլներ: Յեթե նրանք յեղացրներ են, ապա նրանց ափերին ապրող ժողովուրդներն ես յեղացրներ են: Պուշկինը նույն լայնախուռաթյամբ և պարզ սրտով յերգել ե խապանական Գվաղալիկիվրը, ինչպես ուկրայինական Դնեպրը, Յեփրատը և «Եփիրական Արփաչայը», Լեռնաստանի Թերեքը և Վրաստանի Արագվան ու Քուռը և այլն:

Պուշկինի սիրտն ու հոգին բաց են յեղել բոլոր ժողովուրդների և ազգերի համար: «Լինելով ոռու մեծագույն ազգային բանաստեղծ, ոռու զբական լեզվի ստեղծողը, ոռու պական նոր գրականության նախահայրը, վոր «հարսացրել և կուլտուրան այնպիսի յերկերով, վորոնց մեջ զեղարվեստական վիթխորի ուժով արտահայտել և ոռու ժողովրդի լավագույն վորդիների մտքերը, զգացմունքները, տեսչերը» («Պրավդա»):

Ավելի քան ցայտուն ե «Յեղենին Ոնեգին»-ի այն տունը, վորի մեջ բանաստեղծն անհուն կարոտով սպասում է իր աղատության ժամկին, վորպեսզի թոթափի իրեն կաշկանդող կապանքները և ոլանա գեղդի «իր Աֆրիկան»:

Կգա^o արդյոք ժամն իմ ազատության,
Ժամ ե, ժամ ե,—կանչում իմ նրան:

Թափառում եմ ծովի վրա *), սպասում հովի,
Զեռօվ եմ անում նավերի առագաստներին:
Հանձնված հոգմերին, կոհակեների դեմ վոգորելով,
Յե՞րբ պիտի սկսեմ իմ ազատ վազքը

*) Գրված ե Ռուսաց (ծանոթություն Պուշկինի):

Ծովի ազատ համբեխավ:

Ժման և քողնել տիք տադտկալի
ինձ համար չարկամ տարերի,
թեվ հարավի ալեծածան ջրերում
Յերենակամարի տակ իմ Աֆրիկայի
Կարուսով հիշել մոռայլ Ռաւսատան,
Ուր տաճզել եմ յես, ուր սիրել եմ յես,
Ուր քողել եմ յես իմ ութը:

Այստեղ չեմ միայն, վոր Պուշկինը նշում և իր հեռավոր ազգակցական կապն Աֆրիկայի հետ: «Յեղքենի
Ռնեգին»-ի առաջին հրատարակության ծանոթությունների մեջ Պուշկինը գրում ե. «Հեղինակը մոք կողմից աֆրիկական ծագում ունի», և մանրամասն տալիս ե այդ ծագման պատմությունը և իր նախապատ Աբրամ Աննիբալի կենսագրությունը: 1824 թվին Վյազեմսկուն ուղղած մի նամակում խոսելով հույների ազգատագրական շարժման մասին՝ Պուշկինը գրում ե. «Հույների ճակատագրի մասին թույլատրված ե գատել այնպես, ինչպես իմ յեղբայր նեղերի ճակատագրի մասին»: «Յեղիպսական դիշերները» բանաստեղծի հանճարի թոփիքն ե գեղի Աֆրիկայի հնագարյան պատմությունը, վոր սերտորեն առնչվում ե Արեգելքի պատմության հետ: Պուշկինը ներծծելով իր մեջ Արևմուտքի ամբողջ կուլտուրան՝ սկսած հելենականից մինչև իրեն ժամանակակից համայնքրոպականը՝ Բայրոնի նման դուրս յեկավ «զառամած Յելրոպայի» սահմաններից: Բայրոնի նման Արևմուտքից կամուրջ ձգեց գեղի Արևելք և դարձավ ամբողջ աշխարհի պունտը:

III

Բեսարաբիայի Քիշնեվ քաղաքը անցյալ դարի 20-ական թվերին դեռևս լիովին պահպանում եր իր ասիական կոլորիտը: Բանաստեղծը Քիշնեվում ապրեց 1820 թ. սեպտեմբերից մինչև 1823 թ. հունիսը (վորոշ ընդհատումներով), վորակես հսկողության տակ գտնվող «պաշտոնյա»: Քիշնեվում Պուշկինը շփվում եր տեղական ազգաբնակության հետ, լինում եր ուռմինական և հունական «արխստոկրատիայի» շրջանում: Քաղաքի ազգաբնակությունը շատ խայտարգեստ եր. այնտեղ կային ուռմանացիներ, հույներ, մոլդավացիք, հրեաներ, թուրքեր, հայեր, ֆրանսիացիք, իտալացիք և այլն: Այստեղ եյին գտնվում նաև թուրքերի լծից ազատագրվելու համար ապստամբական շարժում սկսած հույների մի քանի առաջնորդները, վորոնց հետ նույնպես Պուշկինը շփվում եր: Այդ շրջանում Պուշկինը ջերմ կողմնակից եր հունական ազատագրական շարժմանը, հայտնի յենքա «Վուաքի յել, ով Հունաստան, վոտքի» բանաստեղծությունը

Պուշկինը հաճախում եր քաղաքի արեվելյան թաղերը, հատկապես այցելում եր «Կանաչ պանդոկ» կոչված սրճարանը, վորակեղ հենց գրի յե առել «Սեվշալը» հայտնի բանաստեղծության սյուժեն մի ուռմինունու պատմածից: Պուշկինն սկսել եր սովորել սումաներենը, ավելի մոտիկից ծանոթանալու համար տեղական բարքերին և փոլիլորին, ուռմաներենից թարգմանել ե գնչուական մի պարերգ («Զեմֆիրայի յերգը»):

Քիշնեվից Ողեստ տեղափոխվելով, Պուշկինը զգաց իրեն «յեվրոպական» քաղաքում համեմատած

Քիշնեվի հետ, վոր նրան թվում եր կատարյալ արեգիլքը: 1823 թ. մի նամակում Պուշկինը գրում է Ողեսայից, «Հարկավոր ե ինձ նման յերեք տարի անց-կացնել ամսիական խեղող՝ աքսորավայրում» զգալու համար և վոչ ազատ յերպատական ողի արժեքը»: Ասկայն Ողեսայում Պուշկինի արեվելյան հետաքրքրությունները չնվազեցին, ընդհակառակը, կարելի յե ասեմ վոր կիսայիշվրոպական այդ նավահանգստում, արեվելյան յերկրների մոտիկ հարեվանությամբ՝ Պուշկինն ավելի դպրեկ կերպով զդաց: Արեվելքի շունչը: Ողեսայում ապրելով՝ Պուշկինն իրեն զգում եր արդեն մասամբ Արեվելքում: Այդ քաղաքը Յեկրոպայի և Ասիայի մի խառնուրդ եր հանդիսանում: «Յեկենինի Ռնեգինի» վերջին զլխում, վոր հեղինակը գուրս եր թողել պոեմից, նկարագրված և Ռնեգինի ճանապարհորդությունը դեպի հարավ: Ռնեգինը գնում և Աստրախան, իսկ այնտեղից՝ Կովկաս: Նա տեսնում և «Կամակորթերեքը», «Արագվայի և ոռոքի տիերը», այնուհետև նա անցնում և Տագրիկան նահանգը՝ Ողեսա, «ուր յես ատշրում ելի այն ժամանակ», ասում և Պուշկինը, — «վորտեղ քայլում և հպարտ սլափոնը, քրանսիացին, իսպանացին, հայը և հույնը, և ծանրաշարժ մոլդավացին, և յեգիպտական յերկրի վորդին, նախկին ծովահեն Մորալին»*): Այս խայտարգետ հարավային նավահանգստում Պուշկինը զգում եր իրեն «ինչպես մուսուլմանն իր դրախտում, խթելով արեվելյան թանձրախիտ սուրճը, և Ստամբուլի ափերից սպասե-

*) Մավր Ալի, Թուրք նավաստի, վոր անուն եր հանել իր ծովային ապամբություններով:

լով վոստրեներ»: Այսպես և գրում պոետը, կատակելով իր արեվելյան հրապուրանքների մասին, Սակայն միայն այդ չեր նրա զբաղմունքների առարկան: Արեվելքի հրապուրանքները զուղորդելով Թոսինիի ոռհերտաների հետ, վոր նա լուսմ եր Ողեսայի իտալական թատրոնում, Պուշկինն անհամբեր լուրեր եր սպասում Իտալիայի և Հունաստանի ազատագրական պայքարի մասին: Տակավին Քիշնեվում նա ծանրթացել եր հունական ապատամբության գեկավարներից՝ Իտալիանտիր հետ, վորի մտակի Պուշկինը զրում ե իր «Կիրջալի» պատմվածքում: «Յեկենինի Ռնեգինի» 10-րդ գլուխում, վոր Պուշկինն ինքը վոչնչացրել ե և վարից մեացել են միայն կցկոտուր հատվածներ, մենք գտնում ենք մի քանի առ Իտալիանտիր, ինչպես և Ապանիայում, Իտալիայում և Հունաստանում ծայր առաջ ազգային-ազատագրական պայքարի մասին:

Յնցվում եյիս անեղ Պիրենեները,
Նեապոլի հրաբուխն եր բոցավառվում,
Անձեռ իջխանը Քիշնեվից
Արցեն նշան եր տալիս
Մորեայի բարեկամներին:*)

Հանբածանոթ են Պուշկինի այս շրջանի քաղաքական արամագրությունները, յերք նա առանձնապես մոտիկ եր զեկաբրիստներին և անձամբ շփում եր նրանց հետ:

*) Ալեքսանդր Խաղիկանտին մի կավի մեջ կորցրել եր ձեռքը:

Մորեան Հունաստանի հարավային Յերակդդին և:

Դեկաբրիստները, ինչպես և նրանց համախոհ Պուշկինը սրբատրով սպասում են աղատագրական շարժման հաղթանակին: Ամենքին գրավում եր Բայրոնի որինակը, վորը հանդես եր յեկել յեկը պատկան ուեակցիայի դեմ և մենակը եր անձամբ մասնակցելու Հունաստանի աղատագրական շարժմանը:

Ճշմարիտ ե, 1823 թվի վերջերին, վորոշ չափով սառել եր Պուշկինի առաջվա վոգեվորությունը Հունաստանի աղատագրական պայքարի նկատմամբ, տեսնելով ապստամբ մարտիկների բարոյազգումը և հեղափոխության պարտությունը Սպանիայում, Իտալիայում և այլն, սակայն, այնուամենայնիվ 1824 թվին Ողեսացից զրած մի նամակում բանաստեղծն ասում ե, վոր «խիստ հետաքրքրվում ե հունական դաստիք»:

Ողեսայումն եր, վոր Պուշկինն ավարտեց և տըպագրելու ուղարկեց Վյաղիմսկուն իր արեվելյան նըշանափոր պոեմը՝ «Բախչիսարայի շատրվանը», վորի ներշնչումը բանաստեղծն ստացել եր-դեռևս 1820 թ. Ղրիմում կատարած ճանապարհորդության ժամանակ:

Ողեսայումն եր նույնպես, վոր Պուշկինը ձեռնարկեց զուրանի ուսումնասիրությանը՝ ավելի մոտեկից ծանոթանալու համար արեվելյան ժողովուրդների կենցաղին ու բարքերին: Այս ուսումնասիրության արդյունքն են Պուշկինի նշանավոր «Նմանությունները զուրանին», վորոնց միջ բանաստեղծը զարմանալի հարազատությամբ և բանաստեղծական վառվը ուսույներով տալիս ե արեվելյան, հատկապես արաբական կոլորիտով, բնության և կենցաղի առարակական համարական կոլորիտով, բնության և միայն Բայրոնի միջոցով:

Նահապառէկ գծերը: Պուշկինի այդ բանաստեղծությունները կազմում են նրա «Արեվելյան քնարի» շոշափողուն դոհարները, վորոնց մասին բարձր գնահատականով խոսում ե Բելինսկին, իսկ Տուրգենևը իր մի նամակում խորհուրդ ե տալիս Ա. Ակսոկովին: «Վաղմեց ե չեք կարգացել Պուշկինի արեվելյան բանաստեղծությունները, վերստին կարգացեք, յես խենթանում եմ դրանցով»:

Սակայն Պուշկինը զուրանին մոտենում եր գլխավորապես իրեւ արեվելյան վառ յերեակայության և պոեզիայի արտահայտություն: Հայտնի յե Պուշկինի գնահատականը զուրանի մասին: Նա միանգամայն համաձայն ե, վոր զուրանը վոչ այլինչ ե, յեթե վոչ «նոր սոի և հին տառապելների հավաքածու» («Ըօբրանություն մ լիւ և շալայի հասեն»):

Հուրանը և «Հազար և մեկ գիշերները», վորոնց նա շատ լավ ծանոթ եր ֆրանսերեն թարգմանության միջոցով, Պուշկինի համար ներկայացնում ելին գլւխավորապես արեվելյան պոեզիայի հարուստ շտեմարան: Նա յերբեմն վերցնում եր արեվելյան պոեզիայի պատկերները և իր հանճարի ուժով տալիս եր միանգամայն ինքնուրույն և ինքնատիպ պոեզիա: Միաւ և այն կարծիքը, թե Պուշկինը արեվելյան պոեզիայի պատկերներին ծանոթացել ե միայն Բայրոնի միջոցով:

Պուշկինը, սակայն, հենց սկզբից մերժում եր արեվելյան եկողոտիկան, կեղծ արեկելքը: Նա մեծ զգառառությումը եր մոտենում «արեվելյան վոճին», քննագատում եր նրա փքուն և վոլորապտույտ դարձվածքները և խիստ կշատամբում այն բանաստեղծներին, վո-

ըսնք սորկորեն հետևելով անգլիական պոետներին (հատկապես Թոմաս Մուրին*), գրում են կեղծ-ռոմանտիկական արևելյան պոեմներ: Ահա ինչ և գրում նա 1824 թ. իր մի նամակում «Բախչիսարայի շատրվանի» մասին յեղած դիտողությունների առթիվ: «... Արևելյան վուն ինձ համար յեղել և նմուշ, վորքան այդ հնարավոր եմեղ՝ սառն ու խոհեմ յեվրոպացիներիս»:

Իսկ գրանից տառջ 1822 թ. Քիշնելից Պուշկինը գրում ե Պ. Ա. Վյազեմսկուն «... Ժուլովսկին ինձ կատաղեցնում ե. Բնչն և նրան դուք յեկել այդ Մուրի, արեվելյան անհեթեթ յերեվակայության այդ սեթեգիթ ընդորինակողի մեջ»: Այդ դիտողությունը վերաբերում եր Ժուլովսկու «Փերի և հրեշտակ» պոեմին, վոր գրած եր Թոմաս Մուրի «Լալլա Ռուկ» արևելյան պոեմի ազգեցության տակ: Ի դեպ, այսուղ պետք ե ասեմ վոր ինքը Պուշկինը «Ճանապարհորդության» մեջ մեջբերում ե տնում Մուրի կույն պոեմից և արդարացնում ե անգլիացի բանաստեղծի «արևելյան» յերեվակայությունը վրացուհների գեղեցկության վերաբերմաբ:

Պուշկինը դեռևս «Բախչիսարայի շատրվանը» գրելուց առաջ զգաստ վերաբերմունք ունիր գեղի արևելյան վոճը, միայն Բայրոնի մեջ եր գտնում ուրինակելի տիպար արևելյան վոճի ոգտագործման մեջ: Թոմաս Մուրի և նրա նմանների համար Արևելքը լոկ հեղոտիկական, հեքիաթային աշխարհ եր, մարմարե ավաղանների, խորհրդավոր հարեմների, վարդի

*) Թոմաս Մուր, անգլիացի բանաստեղծ (1779—1852):

ու սոխակի, «Հաղար և մեկ գիշերների» շքեղ ու փարթամ աշխարհը: Պուշկինը տանել չեր կարող այլուպիսի բանաստեղծներին, և մի այլ նամակում գրում ե. «... Նա (Մուրը) արդեն չափից շատ արևելյան և և յերեխայաբար ու այլանդակորեն ընդորինակում ե Սաաղիի, Հափիզի և Մահմեդի յերեխայությունը և այլանդակությունը: Յնկոպացին արևելյան փարթամությամբ զմայլվելիս անգամ պետք և պահպանի յեվրոպացու ճաշակն ու հայագելը» (նամակ Վյազեմսկուն, 1825 թ. ապրիլ): Այսուամենայնիվ, ինչպես տեսանք մեծ բանաստեղծը խոստովանում ե, վոր «Բախչիսարայի շատրվանը» գրելիս վորոշ տեղերում նա նմուշ և վերցրել արեվելյան վոճը: Աժրողջ պոեմի արևելյան կոլորիտն ակնհայտ ե և բգխում և հենց պոեմի թեմատիկայից: Պոեմի եպիգրաֆը Պուշկինը վերցրել ե իրանական կլասիկ պոետ Ստագիկ:

«Ծառերն ինձ նման այցելի են ոյս տատիւնին, բայց նրանցից վամանի տրդեն չկան, իսկ մյուսները բափառում են ներուններում»: *)

Արևելագետ Զայկինը յենթագրում ե, վոր այս եպիգրաֆը Պուշկինը վերցրել է Սաաղիի «Բախչիսարայից», վորի Փրանսերեն թարգմանության հետ նա ծա-

*) Պուշկինի համար շատ թանգ եր այս եպիգրաֆը: Իսչպես հայտնի յե, բանաստեղծ նախ վորոշել եր «Բախչիսարայի շատրվան» պոեմն անվանել «Հարեմ», բայց հետագայում հանգեցվելով Սաաղիի այս տուերին, փոխել ե իր մատրությունը՝ իր սիրած եպիգրաֆն արդարացնելու համար: 1829 թ. հոկտ. գըրած մի նամակում Պուշկինն ասում ե. «Բախչիսարայի շատրվանը» սկզբում կոչվում եր «Հարեմ», ասկայն մելածաղձու եպիգրաֆը, վորն անկամակած ահելի յե, բան ամբողջ պուերը, գայթակղեցրեց ինձ»:

Եր սիրած եպիգրաֆի այս տողերը Պուշկինը բերում ե «Յեկ-

Նոթ պիտք ել լիներ: Սաադին «Բոստան»-ում գրում են, վոր «ազնիվ Զեմշիդը մի քանի աղբյուրների վրա դրել եր տպիւ—այս աղբյուրի վրա հանդստացի են շատերը մեզ նման և գնացել՝ կարծես թե աչքերն են թարթել: Յեթե նույնիսկ Պուշկինը նկատի յե ունեցել Սաադիի այս աղբյուրը, ապա նա դրանց իմաստն արտահայտել ե ինքնուրույն ձեվով:

Պուշկինն ամբողջ պոեմը կառուցել և իր յերեալսկայության վառ ուժով: Յեթե նույնիսկ պոեմի հրմանական սյուժեն, Ղըմի խան Գիրեյի անհույս սերը լին իշխանուհի Մարիայի հանդեպ, նրան պատմած լիներ մի յերիտասարդ կին, ինչպես գրում ե Պուշկինն իր մի նամակում (1824 թ.), ապա այդ գեռես շատ քիչ եր այդպիսի գունագեղ և վառվուն պոեմ գրելու համար: Ճշմարիտ ե, հարեմի նկարագրությունները հիշեցնում են Բայրոնի արեվիլան պոեմների համապատասխան տեղերը, սակայն բնության, միջավայրի հրաշալի նկարագրությունները բանաստեղծը հիշենում եր իր անմիջական տպավորու-

գենի ներկինք վերջին զիմի վերջին տունի մեջ, ակնարկելով իր գաղեմը բարեկամներին (Եեկաբբիստներին). —

«Մի քանին արդեն չկան, մի քանին ել հեռու յեն, ինչպիս ասել և յերեմն Սաադին . . .»

Այսեղ ճետաքըքրական և նշել, վոր «Բախչիսարայի շատրվանի» հայ առաջին թարգմանիչ Մ. Եմինը 1879 թ. իր նամատներից մեզում հիշելով հին ընկերներին՝ գրում ե. « . . . Մի քանին արդեն հենդանի չեն, մի քանին ել հեռու յեն, ինչպես յերեմն ասել և Սաադին»: Պարզ ե, վոր Մ. Եմինը վորպես ցիտատ բերել և Պուշկինի պոեմի եպիգրաֆը և վոչ թե ուղղակի Սաադիի խոսքերը «Բոստանից»:

Եյունների վրա: այստեղ արդեն նա Բայրոնից վոչինչ չուներ վերցնելու:

«Բախչիսարայի շատրվանը» համարվում ե Պուշկինի «Բայրոնական—ոռմանստիկ» պոեմներից մեկը և պուշկինագետներից վուսանք հիմնվելով իր խսկ բանաստեղծի այն կարծիքի վրա, թե այս պիեմն ավելի բույլ ե, քան «Կովկասիան գերին», ուզում են վիճաբեկ և «Բախչիսարայի շատրվանի» ինքնուրույնությունը: Սակայն պետք ե հիշել, վոր Բելինսկին համաձայն չեր հեղինակի հետ այս հարցում: Իր նշանափոր հոդվածաշարքում նա գրում ե. «Բախչիսարայի շատրվան»-ի մեջ (լույս տեսած 1824 թվին) նկատելի յի մի նշանակելի քայլ առաջ ձեի տեսակետից . . . Սայս պոեմի հիմքում դրված ե այնպիսի վիթխարի մի միտք, վոր ուժից վեր չեր կարող լինել միայն լիովին զարգացած և առնացած տաղանդի համար. շատ բնական ե, վոր Պուշկինը լիովին չտիրապետեր նրան և թերեւս այդ պատճառով ել նա չափազանց խիստ և գեպի այն: Պոեմի իդեան «Վայրի հոգու վերափոխումն եր սիրո բարձր զգացմունքի միջոցով»—ասում ե Բելինսկին, բայց բանաստեղծը տակալին յերիտասարդ եր և չկարողացավ լուծել այդ մեծ և խոր պրոբլեմը: Սակայն չնայած դրան, այդ պոեմը «սքանչելի և անուշաբույր մի ծաղիկ ե», Պուշկինի յերիտասարդական շրջանի կամբարդիչ յերազը, վորի մեջ ձեղ դյութում ե «պայծառ մի թախիծ, վորն իջել եր պոեմի վրա Արևելքի հրաշալի և ծաղկաբույր գիշերներից և բանաստեղծական այն անըշանքից, վոր արթնացրել եր նրա մեջ Գիրեյի պալատի խորհրդագոր շատրվանի մասին յեղած ավանդությունը»:

Բելինսկին զուր չեր ընդգծում պոեմի արեվիլյան
կոլորիտը Ինքը Պուշկինը, ինչպես տեսանք, հաս-
տառում և քննադատների այն գիտողությունը,
թե աքեմք քջանք է աշխաջանք չետաջութքայ-
կան, և այսուեւ նշեր, վոր բանաստեղծի մտերիմ բա-
րեկամ Պ. Ա. Վազիմինին չափից շատ արեվիլյան իր
համարում պեսմի յերկու ներսութիներից մեկի վրա
ցումի Զարեմայի աչքերի նկարագրությունը: Պուշկինը
Արեմայի աչքերի մասին ասում է՝

Твои пленительные очи
Яснее дня, чернее ночи*)

Այս պատկերի արեվիլյան շքեղ յերանզը կարող
և մըցել իրանական և արաբական կլասիկ լիրիկայի

*) «Բախչիսարայի շատրվանի» մի հին հայերեն թարգմա-
նություն տպված և 1873 թ. Թեոդորիայում (Դ.միմ) լույս տես-
նող «Դաստիարակ» ամսագրի հոկտեմբերի համարում: Բերում էնք
այդ թարգմանության համապատասխան տեղը.

«Կերպեն ու կերպեն: Բայց ուր և Զարեմ,
Այն ասողը սիրո, այն զարդն հարեմի,

• • • • •
իր արմավենի մը կայծակնանար
Կայտառ գլուխը կախած դեպի վար,
Ամեն բան վոչինչ կերեփաւ աչքին,
Զարեմն յերեւ և յաշաց կերելին:
Նենդեր և խանը ... բայց ով կհասնի
Թու գեղեցկությանդ, ովկին վրացի.
Թու շուշանափայլ ճակատիդ չորս դին
Մազիդ գոլորքը կլինել կրկին.
Սիրու հափշտակազ ու սիրուն աչքն
Պայծառ համ զարեմ՝ սեվ են բան զգիշեր».

Հավագույն նմուշների հետ: Պուշկինի հանձարը և գե-
ղարվեստական մեծ վարպետությունը հնարավորու-
թյուն են տալիս նրան սուսական և յելլոպակակա-
կյանքի ամենաբարպմազան բնադրավառների սեալիսն
տական պատկերացման համաձայնար իր յերեջակա-
յության ուժով սավառնել Առևելքի վետ և զարմա-
նալի հարատարությամբ ստեղծել արեվիլյան պիեսինա
լին հարազատ զմայլերի պատկերներ հանաստեղծա-
կան այշտպիսի մի գոհար և «Ծառթարական յերգը*)
Ալչխիստարայի շատրվան» պոեմից:

Սյուպիս են լինում բազմակողմանի հանձարները
Նրանց ստեղծագործության տմեն մի բնագավառ,
ամենափոքր մարզն իսկ կարող և առարկա դառնալ
հատուկ մանրակրկիտ ուսումնասիրության: Պուշկինը
և Արեկիքը—դա մեկն և այն բաղմաթիվ թեմաներից,
վորոնք կարող են դառնալ հատորների նյութ: Մեզ
համար ևս ավելի մեծ հետաքրքրություն և ներկա-
յացնում Պուշկինի ստեղծագործության այդ կողմը:
Մենք արդեն անանք, վոր Պուչկինը հենց
սկզբից զգաստ-ռեալիստական վերաբերմունք և ունե-
ցել դեպի Արեկիք և «Արեկելյան վոճը»: Այդ վերա-
բերմունքը յեղել և զիտակցական, քննադատական և
լրջախոճ, ինչպես ինքն և ասում, «յեկըռոպացու սառն
դատողության վերաբերմունք»: Նա չի իդեալականացրել

*) Այս յերգը յերաժշտության և վերածել Ա. Սպենդիար-
յանը: Իսկ ամբողջ պոեմի նկարչական գեղեցիկ էլլուստրացիան
հայ նկարիչներից կատարել և Վարդգես Սուրենյանը: Դրանց
լավագույն նմուշները տպված են Վենգերովի և հատորանոց շքեղ
հրատարակության մեջ, վորակ տպագրվել են նաև Հ. Այվա-
զովսկու նշանագոր նկարները «Պուշկինը Ղրիմում» թեմային սը-
դիրված:

Արևելքը: Հարկ յեղած դեպքում նա ընդգծել է արեւ-
վելան վոճի պայմանական բնույթն իր համար: Այս-
պես, որինակ՝ Պուշկինը վերցնում է արևելյան պոե-
տիայի շատսիրված թեմաներից մեկը՝ վարդի և առխա-
կի վեպը և իր սքանչելի բանաստեղծությունների
մեկի մեջ այդ թեման զարգացնում է բոլորովին ինք-
նատիպ կերպով: Յերբ կարդում ենք այդ բանաստեղ-
ծությունը («Սոխակ»), վորը գրված է 1827 թվին,
առաջին հայացքից թվում է, վոր դա կարող է թարգ-
մանություն լինել Հաֆիզից կամ իրանական մի այլ
խոշոր լիրիկից: Սակայն մի եպիտես բավական է ցը-
րելու ձեր այդ տպավորությունը, իսկ ամբողջը կար-
դալուց հետո, զգո մ եք, վոր դա բանաստեղծի ամեն-
ախոր զգացմունքի արտահայտությունն ե՞ւ բղխած
ամմիջականորեն նրա սրտի և հոգու ակունքներից է
վոր դա վոչ մի ընդհանուր բան չունի բանաստեղծա-
կան նմանողության կամ վոճավորման հետ: Անա այդ
բանաստեղծությունը, վոր ընդամենը յերկու տուն ե և
իր ձեռվ հիշեցնում է արևելյան ամենասքանչելի դա-
պելները.

Վառ դարուն ե: Լուռ այդու մեջ խորին խա-
ղաղ գիշերին
Արևելքի խոսուն բլբուն սեր ե յերգում գարդ
յարին.
Բայց լուռ ե վարդն... Սիրո տաղին նա
անդգա, անտարբեր
Մեղմ ճոճվում և վոստի վրա և խոր նիրհում
վող գիշեր,

Զի՞ վոր այդպիս գու ել պոմա, գնդից կության
անկենդան
Յերդ ես ձոնում... վահ, ուշքի յեկ քեզ մի
մատնիր կորստյան...
Տես, նազելիդ քեզ չի լուսում, նա անփույթ ե,
անդգա.
Դու նայում ես—նա ծաղկում ե. ձայն ես տա-
լիս—ձայն չկա:
(Թարգմ. Ա. Ծամուրյան)

Վարդի և սոխակի մոտիվը մինչք անենում ենք
նաև 1820 թ գրված մի բանաստեղծության մեջ՝ «Ով
վարդ աղջիկ»*) («Օ ծես — թօւակ և օկօսա», Վորը
կըում և «Նմանություն թուրքական յերգի» յեն-
թավերնագիրը: Սա, անկանակած, նույնալիսի պայմա-
նական վերնագիր ե և, ինչպես «Հաֆիզից» բանաս-
տեղծության անունը, վորը, ինչպես տեսանք, Հաֆիզին
չի պատկանում և կրում և «Ճամբար Յեփրատի մոտ»
(«Լաւեր որի Եֆրատ») յենթավերնագիրը: «Ով վարդ
աղջիկը» իր բովանդակությամբ բավական նման է
«Սոխակին», ունենալով վարդի և սոխակի նույն ա-
րեվելյան սյուժեին, վորի կլասիկ մշտական նմուշները
ամել և իրանական մեծ լիրիկ Հաֆիզը: «Բախչիսա-
րայի շատրվանի» մեջ նույնպես կա այդ պատկերը:

Յեկ սիրելի վարդից անբաժան
Մութի մեջ յերգում են սոխակները...
Պուշկինի հին կոմենտատորները և նույնիսկ Ժա-
մանակակից պուշկինագետներից վոմանք բանաստեղծի

*) Հայերեն թալրզմանել և Հովհաննիոյանը

այս պատկերները համեմատում են Բայրոնի արեւացյան պունիների («Դյագուր», «Արիդոյան հարսնացու» և այլն) մեջ հանդես յեկող համապատասխան պատկերների հետ և կարծես թե ուզում են դրանով ժիտուլ Պուշկինի արեւելյան մոտիվների մշակման ինքնուրույնությունը։ Այս տեսակիտը՝ միանգամայն անհիմ է, յեթե նկատի ունենանք, վոր Ռուսաստանի հարավում, Ղրիմում և Կովկասում իր լած ժողովրդական յերգերի մեջ, Պուշկինը չեր կարող չհանդիպել այդ մոտիվներին, ել չենք խոսում այն մասին, վոր բանաստեղծը զիցուք վարդի և սոխակի մոտիվը կարող եր վերցնել ենց ուզգակի Հաֆիզից և իրանական այլ պունիներից, վորոնց հետ նա ծանոթ պետք է լիներ զիսավորապես Փրանսիական թարգմանությունների միջոցով։ «Քարդ աղջիկ» համեմատությունը շատ սովորական ե արեվելյան բոլոր ժողովրդական յերգերի մեջ, ինչպես և հայ ժողովրդական յերգի մեջ։

Ինչ վերաբերում է այն վերնագրերին, վորոնցով Պուշկինն ընդգծում եր իր տվյալ բանաստեղծության արեվելյան ծագումը («Հափիզից», «Նմանություն թուրքական յերգին» և այլն), ապա, անկատակած, դրանք ունեցել են վորոշ նպատակ՝ վորպես մտքի քողարկման միջոց կամ վորպես սոսկ գրական համարք։ Համենայն դեպք արեվելյան բանաստեղծություններից շոտերը թերաղրված են յեղել բանաստեղծի անձնական ապրումներից և նույնիսկ ունեն կենսադրական նշանակություն, պարզելով Պուշկինի այս կամ այն շըանի արամագրությունները և նրան հուզադ մտքերը։ Այդ բանաստեղծություններից մի քանիսը, անկատակած, կապ ունեն Պուշկինի սիրութակաների հետ։

Եստ հետաքրքրական ե Պուշկինի 1821 թ. մի անավարտ սեազիր ուրվագիծը, վորի մեջ բանաստեղծը պատմում է Ղրիմի չքավոր թաթարների կյանքից մի դեպք։ Բանաստեղծը նկարագրում է չքավոր մուսուլմանի չարքաշ աշխատանքը, տալիս և արևկեցան կենցաղի մաւրամանությունները և նշում է, թե վորքան գժվար և չքավորի համար ճարել մի կտոր դայմագը (չոր սևը)։ Բանաստեղծությունը վերնագիր չունի, առաջին տողն սկսում է այսպես՝ «Յուրգումութում մի խնդիր մուսուլման», անձնավորությունների անուններու են՝ Մե հմեդ (Մահմուդ), Ֆաթմա և այլն։

Արևելյան ցայտուն կոլորիտ ունեն Պուշկինի մի շաբաթ այլ բանաստեղծությունները, ինչպես՝ «Թալիսման» (1827), «Պահպանիր» ինձ, իմ թալիսման» (1828), «Լեյլա» բանաստեղծությունը Պուշկինը փոխադրել և արաբերենից Փրանսերենի միջոցով (1835)։ Արևելյան մոտիվների թվին են պատկանում, անկատակած, «Անչար» (1828) և «Մարգարե» (1826) հոչական վոր բանաստեղծությունները։ Վորպես արևելյան տպագրությունների աբրասիք և կամ, անկատակած, արևելյան վոճի զրոշմ կրող բանաստեղծություններ կարելի յե հիշատակել «Բախչիսարայի շատրվանը» (1820), «Հելլենուհուն» (1822), «Արյանս մեջ վառվում և ցանկության հուրը» և «Իմ քրոջ պարտեզը» (նմանություն «Յուրգ յերգոցի») և այլն։

Մենք արդեն նշեցինք, վոր Պուշկինի ստեղծագործության բաղմակողմանի և հարուստ գանձարանում արևելյան մոտիվներն անգրագրածել են ինքնատիպ կերպով։ Յուրաքանչյուր այդպիսի պատկեր կամ մոտիվ նա վերտին ստեղծագործել ե իր արվեստի

անհավասարելի ուժով, լեզվի հնչունական սքանչելի յերաժշտականությամբ գերածելքանաստեղծական ճշշմարիտ գոհարաների, ճաճանչափայլ և քաղցրահնչյուն:

Պուշկինի պոետական մեծ «տակտը» (Բելինսկու արտահայտությամբ), նուրբ ու բարձր ճաշակը և գեղեցիկագիտական խոր ըմբռնումը վրդովվում ելին «արթվելյան գոճի» անկենդան ընդորինակությունների և կեղծ ու տափակ թարգմանությունների դեմ: Պուշկինը խոստովանում եր, վոր ծանոթ չե արեգելյան բանաստեղծությանը՝ բուն իսկ բնագրերի միջնորդ: Նա կարող եր նրա մասին գաղափար կազմել ֆրանչերեն կամ ոռւսերեն թարգմանությունների միջնորդ, սակայն նրա բնածին առողջ միտքը և փայլուն ու նուրբ ճաշակի գգացումն իսկույն նկատում ելին կեղծիքը: Այս տեսակետից հետաքրքրական ե բանաստեղծի մի դիտողությունը «Северн. Лира» («Հյուսիսային քնար») ժուրնալում արելյան պոետներից կատարված թարգմանությունների մասին:

Այդ ժուրնալի հրատարակիչներից մեկը՝ Ռուբշնը արաբ մի բանաստեղծից թարգմանություններ եր տպել, վորոնց մասին Պուշկինը սրամտորեն նկատում ե. «արտաքական ժուրնալիստներին ենք թողնում պաշտպանելու իրենց պոետների պատիվը...»*) «Հյուսիսային քնարի» մեջ տպված եր նաև նույն հեղինակի մի թարգմանություն Հաֆիզից «Օդա Գաֆիցա»**)

*) Տիկ Պուշկինի քննադատական հոդվածները («Об Альманахе «Северная Лира»:

**) Տիկ «Сочинения Пушкина», изд. Ак. Наук СССР, т. 9-й, Лен. 1929, № 105 (ժանոթությունները):

վերնագրով, վորի մասին նույնպես բացասարկան կարծիք և հայտնել ժամանակի մամուլը: Այնուամենայնիվ այս ամենը ցույց է տալիս, վոր անցյալ գարի 20-ական թվերին արգեն ուստական գրականության մեջ նկատվում եր բափական մեծ հետաքրքրություն գեղի արևելյան գրականությունը, մասնավորապես գեղի պոեզիան: Այս հետաքրքրության մեջ, անկասկած, աշանակալի դեր եր խաղում Պուշկինի պոեզիան: Առանձնապես հսկայական հաջողություն ունեցավ «Բախչիսարայի շատրվան» արևելյան պոեմը և նյութապես ել բափական ոգնեց պոետին, վոր պոեմի համար ստացավ 3000 ուրլի—այդ ժամանակի համար չտեսնված մի վարձատրություն: Գրավաճառները (հրատարակիչները) իրար ձեռքից խլում ելին պոեմը հրատարակելու իրավունքը: Հեղինակի կենդանության որով «Բախչիսարայի շատրվանը» հրատարակեց չորսանգամ: 1825 թ. Պետերբուրգում բեմադրվեց «Շատրվանը» իշխ. Ա. Շախովսկու կազմած լիբրետոյով՝ արելյան պարերով և յերաժշտությամբ: Զարեմայի գերը խաղում եր հայտնի գերասանուհի Սեմյոնովան:

IV

Հետաքրքրվելով արևելյան ժողովուրդների*) կենցաղով և պատմությամբ՝ Պուշկինը, ինչպես տեսանք,

*) Պուշկինը գեղի երգում կատարած ճանապարհորդության ժամանակ հետաքրքրվել ենակ քուրդ-յեղիներով, վորոնց մասին գրում ե իր ուղեգրության մեջ: Բացի այդ, Պուշկինը թվերի մեջ գտնվել է Փրանսերեն լեզվով մի ձեռագիր՝ «Notice des Yéladis»—«Դիտողություն յեղիների մասին», վոր գերջեր հրատարակած և «Рукою Пушкина» գրքում:

անհավասարելի ուժով, լեզվի հնչունական սքանչելի յերաժշտականությամբ վերածելը աստեղծական ճըշմարիտ գոհարների, ճամանչափայլ և քաղցրահնչյուն:

Պուշկինի պոետական մեծ «տակտը» (Բելինսկու արտահայտությամբ), նուրբ ու բարձր ճաշակը և գեղեցկադիտական խոր ըմբռնումը վրաբովվում ելին «արեգելյան վոճի» անկենդան ընդորինակությունների և կեղծ ու տափակ թարգմանությունների դեմ: Պուշկինը խոստովանում եր, վոր ծանոթ չե արեգելյան բանաստեղծությանը՝ բուն իսկ բնադրերի միջոցով: Նա կարող եր նրա մասին գաղափար կազմել ֆրանսերեն կամ ուստերեն թարգմանությունների միջոցով, սակայն նրա բնածին առողջ միտքը և փայլուն ու նուրբ ճաշակի զգացումն իսկույն նկատում ելին կեղծիքը: Այս ականակետից հնատաքը բարական և բանաստեղծի մի դիտողությունը «Սևերի Լիրա» («Հյուսիսային քնար») ժուրնալում արելյան պոետներից կատարված թարգմանությունների մասին:

Այդ ժուրնալի հրատարակիչներից մեկը՝ Ողնորշինը արաբ մի բանաստեղծից թարգմանություններ եր տպեր, վորոնց մասին Պուշկինը սրամտորեն նկատում ե. «արաբական ժուրնալիստներին ենք թողնում պաշտպանելու իրենց պոետների պատիվը...»*) «Հյուսիսային քնարի» մեջ տպված եր նաև նույն հեղինակի մի թարգմանություն Հաֆիզից «Օդա Գաֆիզա»**)

*) Տե՛ս Պուշկինի քննադատական հոդվածները («Օ Ալմախե «Սևերնա Լիր»»:

**) Տե՛ս «Сочинения Пушкина», изд. Ак. Наук СССР, т. 9-й, Лен. 1929, № 105 (ժամանթությունները):

վերնագրով, վորի մասին նույնպես բացասարկան կարծիք և հայտնել ժամանակի մամուլը: Այնուամենայնիվ այս ամենը ցույց է տալիս, վոր անցյալ դարի 20-ական թվերին արգելու ոռուսական գրականության մեջ նկատվում եր բավական մեծ հետաքրքրություն գեպի արևելյան գրականությունը, մասնավորապես գեպի պոեզիան: Այս հետաքրքրության մեջ, անկասկած, նշանակալի դեր եր խաղում Պուշկինի պոեզիան: Առանձնապես հսկայական հաջողություն ունեցավ «Բախչիսարայի շատրվան» արելյան պոեմը և նյութապես ել բավական ոգնեց պոետին, վոր պոեմի համար ստացավ 3000 ուորլի—այդ ժամանակի համար չտեսնված մի վարձատրություն: Գրավաճառները (հրատարակիչները) իրար ձեռքից խլում ելին պոեմը հրատարակելու իրավունքը. հեղինակի կենդանության որով «Բախչիսարայի շատրվանը» հրատարակվեց չորս անգամ: 1825 թ. Պետերբուրգում բեմադրվեց «Շատրվանը» իշխ. Ա. Շախովսկու կազմած լիբրետոյով՝ արելյան պարերով և յերաժշտությամբ: Զարեմայի գերը խաղում եր հայտնի դերասանուհի Սեմյոնովան:

IV

Հետաքրքրվելով արեկելան ժողովուրդների*) կենցաղով և պատմությամբ՝ Պուշկինը, ինչպես անուանք,

*) Պուշկինը գեպի երգում կատարած անապահորդության ժամանակ հետաքրքրվել ենակ քուրդ-յեղիներով, վորոնց մասին զբում ե իր ուղեգրության մեջ: Բացի այդ, Պուշկինը թղթերի մեջ գտնվել ե Քրանսերեն լեզվով մի ձեռագիր՝ «Notice des Yézidis»—«Դիտողություն յեղիների մասին», վոր գերջերս հրատարակված ե «Рукою Пушкина» գրքում:

իր այդ հետաքրքրության զբանակների մեջ եր առանում նաև թուրքերին ու հայերին, վորպես արևելյան ժողովուրդների: Ակնհայտ է, վոր «Ճանապարհորդություն» դեպի Երզրում»-ը գրելիս Պուշկինը հատկապես ուսումնասիրել եր յիշրոպացի ճանապարհորդների ուղեգրությունները և Հայաստանի հին պատմությունը: Դրան ապացույց են լատին կրտսեր բանաստեղծի այն խոսքերը Հայաստանի մասին, վոր Պուշկինը բերում ե վորպես ցիտատ—

Usque nec Armeniis oris,
Amice Valgi, stat glacies iners
Menses per omnes...*)

Պուշկինը հիշատակում ե Երզրումի հիմնադրման թվականը (415թ.) և հին անունը՝ Թեոդոսուալովիս, և տալիս ե Երզրումի անվան արտասանության տարերձերը (Արզերում, Երզրում, Երզրոն): Հետաքրքրական և հոգի կամրջի (Արաքսի վրա) նկարագրությունը և նրա կառուցման հետ կապված ավանդությունը:

«В 15 верстах от Гассан-Кале находится мост, прекрасно и смело выстроенный на семи неравных сводах. Предание приписывает его построение разбогатевшему пастуху... Мост называется Чобан-Кепри**).»

*) «Յեկ Հայտանի յերկիրը, բարեկամ վալիկոս, վոչ ամբողջ տարին պատած անշարժ սառա յցով».

**) «Ճանապարհորդություն դեպի Երզրում» գլ. 4-րդ: «Հասն Դամիլը 15 գերսու նեռու գոնգում ե մի կամուրջ, հիանալի և համարձակ կերպով կառուցված յոթն անհավասար կամարների վրա Ավանդությունը նրա կառուցումը վերագրում ե մի հարստացած հոգին . . . կամուրջը կոչվում է «Պորան Քեփրու»:

Վոր Պուշկինը բավական ծանոթ եր Արեվելքի մասին յեղած գրականության, այդ յերեվում ե նաև նրանից, վոր նա «Ճանապարհորդության» մեջ հիշատակում ե Հաջի Բարայի անունը, վոր անգլիացի ճանապարհորդ և դիվանագետ Զ. Մերիերի^(*) հայտնի վեպի հերոսն եւ Ալի վեպը լույս ե տեսել 19-րդ դարի սկզբներին «Հաջի Բարայի արկածները» վերնագրով: Հաջի Բարան վորպես պարսից դեսպանին ուղեկցող՝ նրա հետ միասին անցել եր Երզրումի վրայով Անգլիա գնալու համար և այսուղի ինչպես հիշատակում ե Պուշկինը, «Հաջի Բարայի վկայությամբ՝ պարսից դեսպանին հասցված ինչ վոր վիրապրանքի փոխարեն հատուցելու համար նրան մատուցել ելին հորթի ականջներ՝ մարդու ականջների տեղ**): «Հաջի Բարայի արկածների նման սրամիտ մի գիրք չեր կարող վրիպել Պուշկինի ուշադրությունից:

Անհրաժեշտ է նշել վոր մեծ պոետ ուելիստը վորեն առանձին վերաբերմունք կամ կանխակալ կարծիք չի ունեցել դեպի այս կամ այս ժողովուրդը: Նա

*) Մորֆերն ունի նաև մի ուղեգրություն «Second journey through Persia, Armenia, and Asia Minor, 1818, London» («Յերկրորդ ճանապարհորդություն Պարսկաստանում, Հայաստանում և Փոքր Ասիայում»):

**) «Ճանապարհորդություն դեպի Երզրում»: Պուշկինը սոսկ հիշողության վրա հիմնվելով՝ այժի ականջների փոխարեն մասում ե հորթի ականջները: Պարսից դեսպանը հրամայել եր կըուրել իր ծառաներից մեկի ականջները: Այս հոգի վրա վեճ եր ծագել նրա և Երզրումի փաշայի միջև: Վերջը դեսպանին խարել ելին՝ ուղինապահնց ծառայի ականջների փոխարեն նրան մատուցելով այժի ականջները: Տես. «Հաջի Բարայի արկածները» (Անգլիայում) թարգմ. Մկր. Կարապետյան, 1905 թ.

հավասարապես հետաքրքրվել ե այն բոլոր ժողովուրդների կյանքով, վորոնց առիթ ե ունեցել հանդիպելու, և բարեխղճորեն ուսումնասիրել ե փաստերը:

Հետաքրքրական ե նշել, վոր Պուշկինը «Փափրիլիադա»-ում հիշատակում է ինչ-վոր «հայկական ավանդություն», վորպես ազբյուր իր նշանավոր պոեմի: Դժվար ե ասել, թե խոսքն ինչ ավանդության մասին ե: Գոյց նման մի առասպել Պուշկինը լսել ե Քիշների իր ծանոթ հայերից*), կամ թերևս դա սոսկ գրական մի կատակ ե՝ համապատասխան պոեմի կատակախառն փողուն: Սակայն փաստն այն ե, վոր նույն այդ ըսրանում (1821—22 թ.) Պուշկինն սկսել եր գրել և անավարտ թողել մի հեքիաթ կամ պոեմ հայկական կյանքից, դա մի ինքնաղիք սեազրություն ե, վոր առաջին տնօտամ արխիվից հանվել և 1884 թվին և այնուհետև տպազրվել ե Պուշկինի յերկերի լիակատար ժողովածուների մեջ: Ահա այդ սեազրը ուրվագիծը.

1.

Зачем раздался гром войны
Во славном царстве Зензевея,
Поля и села зажжены...

*) Քիշնեռմ Պուշկինը, անտարակույս, շփում եր նաև հայերի հետ, վորոնք այնազ բավական բազմամարդ գաղութ ելին կազմում, և հավանաբար նրանցից ուներ անձնական ծանոթներ: Պ. Ի. Ռոլդուրուկովի որագրում, վորը վերջերս հայտաբերվեց և վորից մի քանի հատվածներ տպազրվեցին «Պատագա»-ից մ. Պուշկինի ծանոթների թվում հիշատակվում են Խուդաբաշնի ազգանունով մեկը: Հետաքրքրական կինի պարզը, թե սա 1838 թ. լույս տեսած հայուս բառարանին հեղինակ Խուդաբաշնը չէ արդյոք, վոր ունի նաև ուսուերեն աշխատություններ, ինչպես՝ Ա. Մ. Խաչատրյան: «Обозрение Армении в географическом, историческом и литературном отношении» (Санкт-Петербург, 1859):

(В Армению, в палатах Зензевея)
С-еезжаются могучие цари,
Царевичи, князья, богатыри,
Армянский царь их ласково встречаая,
Готовит пир — столы свои
И с ними добрый Зензевей
Пиরует ровно 40 дней.

3.

Себе ты выбрал, Зензевей,
Кого союзником и другом?
Кто будет счастливым супругом
Царевны, дочери твоей?
Она мила, как (ландыш) мая,
Резва, как лань кавказских гор..
(Невинна, как...)*).

1.

Ինչու հնչեց առամի վորոտը
Զենզեվեյի տերության մեջ փառավոր,
Հրկիզիցին դաշտեր ու գյուղեր...

*) А. С. Пушкин, «Полное собрание сочинений» Гос. изд. «Художеств. Лит.», 1935 г., т. I, стр. 527.

(Դեպ Հայաստան, ապարանքը Զենդեվեյթի)
 Փողովում են արքաները հզոր,
 Արքայորդիք, իշխաններ, դյուցագններ,
 Հայոց արքան ընդունում ե նրանց սիրով
 Յեկ բացում ե խրախճանքի սեղաններ,
 Յեկ նքանց հետ կողք-կողքի բարի Զենդեվեյթը
 Քեզ ե անում 40 որ ու գիշեր:

Ուժն ևս ընտրել ով Զենդեվեյտ,
 Քեզ դաշնակից ու բարեկամ,
 Վոր բախտավորն ե առնելու
 Արքայագուստը քո աղջկան.
 Չքնաղ ե նա, ինչպես (շուշան) մայիսի,
 Վառվուն ե, ինչպես այծյամն կովկաս սարերի
 (Անքիծ, ինչպես . . .)

Այստեղ ել վերջանում ե սևադիրը: Պետք ե յեն-
 թաղբեր վոր սա մի հեքիաթի կամ լեզենդի սկիզբն
 ե:

Ըսթերցողի մեջ թերես կարող ե տարակույս տ-
 ուաջացնել Զենդեվեյտ անունը, վոր ոտարուի յե հնչումը
 Վորքան մեզ հայտնի յե, հայոց պատմության մեջ
 այդպիսի անուն չկա, թեև կան նմանաձայն բառեր ե
 անուններ՝ ինչպես Զավեն, զեն (զենք), Զենոր ե
 այլն: Պետք ե յենթաղբեր, վոր Պուշկինն այդ անունն
 ստեղծել ե հնչյունական ասոցիացիայով, հիմնվելով Քիշ-

նեվում ապրող հայերից լսած բառերի վրա, ցանկա-
 նալով թերես իր գրվածքի հեքիաթային բնույթին
 համապատասխան ոտարուի մի անուն գտնել վոր-
 անպայման ունենար նաև արեվելյան կոլորիտ: Իսկ
 Զենդեվեյտ անունն իր մեջ ունի ինչ-վոր արևելյան
 բան և տալիս ե հնչյունական հարուստ գամմա: Պետք
 ե նշել, վոր Պուշկինի այս սեվագիքը ուրվագիծը գրե-
 թե ուշադրության չի արժանացել պուշկինագետների
 կողմից, թեև համարվել ե «շատ հետաքրքրական, վոր-
 պես մի ինչ-վոր մեծ ստեղծագործական հղաց-
 ման նախաձեռնարկ» *):

Այս համառոտ ակնարկում մենք ամենիմ հա-
 վակնություն չենք ունեցել ամբողջ ծավալով լուսա-
 րանելու այսպիսի կարեսը մի պրօբլեմ, ինչպես Պուշ-
 կինի կապն Արեւելքի հետ: Մեծ պոետի մահվան հա-
 րյուրամյակի առնչությամբ սա մի փորձ ե գրական
 մի քանի փաստերի ոգնությամբ նշելու Պուշկինի
 ստեղծագործության մեջ հանդես յեկած արեւելյան-
 տարրերը և մի անգամ ևս ընդգծելու նրա հանճարի հա-
 մապարփակ բնույթը: Այդ ևս ավելի անհրաժեշտ ե մեղ,
 ինչպես և Մերձավոր արևելքի մյուս ժողովուրդների-
 համար, վորոնց կյանքով հետաքրքրվել ե Պուշկինը
 և այս կամ այն չափով արտացոլել իր ստեղծագոր-
 ծության մեջ:

*) «Любопытны как приступ к какому то большому замыслу», «Пушкин», под ред. А. С. Венгерова, 5. II, № 611, 1908. С.-П.:

Արեւլյան հայոց գրականությունը զարգացել է ուստի գրականության մեծ ազդեցության տակ և հենց իր ծագման սկզբից սերտորեն կապված է յեղել նրա հետ։ Նույնիսկ արեվմտաշյելքուղական գրականության ազդեցությունը հայ գրականության վրա տարածվել է գլխավորագիս ոռուսականի միջոցով։ 60-ական թվերի ոռուսական առաջավոր մաքի ներկայացուցիչները հակայական ազդեցություն են գործել հայ ժողովրդի մտավորական լավագույն ներկայացուցիչների վրա։ Ռուսական պրոլետարիատի ներուսական պայքարը ցարիզմի և բուրժուազիայի գետ հանդիսացել է այն պանծալի դպրոցը, վորով անցել են մեր հայրենիքի բնուր ժողովուրդները, վորոնց թվում և հայ ժողովուրդը։

Շատ բնական և ուգիմն, վոր այդ մեծ գրականության լավագույն ներկայացուցիչները՝ Պուշկին, Բելինսկի, Չերնիշևսկի, Դոբրույուբով, Նեկրասով, Շչեգրին, Տոլստոյ, Չեխով, Դորկի և այլն, «վորոնք իրենց տաղանդով բարձրացրել են համաշխարհային կուլտուրայի մակարդակը» (Կալինին), հանդիսանային այն բարձր որինակները, վորոնց հետեւել են հայ գրողներից և լանաստեղծներից շատերը։ Սա գրական պատմական կարևոր և նշանակալից մի փաստ է։ Անհնար և գրել արևելահայ գրականության պատմությունը առանց այդ կապակցելու ուստի գրականության պատմության հետ։ Հետագայում մենք կրերենք

որինակներ, վորոնք ցույց են տալիս, վոր մեր խոշորագույն գրողները հայ գրականության զարգացումը չեն պատկերացրել անկախ ուստի գրականությունից։ Այդ տեսակետից ամենացայտունն է մեր մեծագույն պոետ Հ. Թումանյանի այն վկայությունը, թիւ ուստի պատմությունը, գլխավորագիս Պուշկինը և կերպությունը նրան ավելի հարազատ և մոտիկ են յեղել քան հայ մի քանի բանաստեղծներ։

Պուշկինի մահվան հարյուրամյակի կապակցությամբ այժմ կատարվում է թարգմանչական խոշոր աշխատանք։ Մեծ կլասիկի գրական ժառանգությունն իրոք գտանում է հայ ժողովրդի լայն մասսաների սեփականություն։ Կարելի լի ասել, վոր թարգմանվում ե գրեթե ամբողջ Պուշկինը, և չանցած մի տարի հայ ընթերցողն իր սեպանի վեա կունենա Պուշկինի բոլոր գլխավոր յերկերը, վորոնց թվում և «Յելզենի Ռուս», «Բորիս Գորունովը», վորոնց թարգմանությունը դեմ և առնում մեծ դժվարությունների։ Այս յերկու խոշոր յերկերն ել անցյալում անձանոթ են յեղել հայ ընթերցողին իր մայրենի լեզվով։

Յերբ և առաջին անգամ Պուշկինի անունը յերեվացել հայ գրականության և մամուլի մեջ։ Անշուշտ, դժվար և ճշտությամբ պատասխանել այս հարցին։

Մի Փրանսիացի քննադատ*) խոսելով այն մասին, թե յի՞քը և Շեքսպիրի անունը յերեվացել Փրանսիական գրականության մեջ, նշում և այն տարրորինակ փաստը, վոր Շեքսպիրին համարյա ժամանակակից Փրանսիացի մի գրող Սենտ-Եվլըմոնը (1610 - 1703)

*) Pellissier, «Essais de littérature contemporaine» Paris 12-72.

քառասուն տարի ապրելով Անգլիայում, զրելով նույնիսկ թատրոնի մասին, իր դրվածքների մեջ վոչ Արտեղ չի հիշատակել մեծ դրամատորգի անունը, չայսած վոր չեր կարող լսած չինել նրա մասին:

Մոտավորապես նույնը կարելի յե ասել Պուշկինի ժամանակակից մի քանի հայ «գրականագետների» և հայագետների, կղերասելը և «աղջասեր» Սալլան-Բյանների, Զերքեղյանների, Մսերյանների մասին, վորոնք ապրելով Պուշկինի բուն խև ծննդավայրում՝ Արակէնյեվի և Բենկենդորֆի մտերիմ կալվածտեր Լաղարի վաների հովանու տակ, զբաղված եյին նոյատապանի՝ Մասիս լեռան գագաթն իջնելու և հայոց գրաբար լոգուն ուղղակի դրախտի լեզվից սերելու «պրոբլեմը» լուծելով:

Մենք ունենք, սակայն, մի վկայություն, վորի համաձայն՝ 30-ական թվերին (հավանաբար 1834—38) Լաղարյան ճեմարանն ավարտած և Մոսկվայի համալսարանի ուսանող, ապագա գիտնական Մ. Եմինը թարգմանել ե «Բախչիսարայի շատրվանը» և «Կովկասյան զերին»: Այս վկայությունը քաղված և Հօբրանի ակտությունը՝ «Մկրտիչ Եմինը, ասված և այդ դրեթ յերրորդ հատորի մեջ (եջ՝ 220), աշակերտ Լազարյան ճեմարանի, վոր ուղարկված եր ճեմարան Հնդկաստանի կալվաթայից կրթություն ստանալու համար, թարգմանել ե ուսուելունից հայերեն գրաբար Պուշկինի շարադրություններից՝ «Բախչիսարանի ՓՈՒԹԱ» և «Կավկազի ՊԼԵՆԻԱ»: Այս թարգմանությունները շուտով լույս կտեսնեն և այն ժամանակ

«Շատրվանի» և «Գիրյալի» յերգիչը կհռչակվի Ասիայի գանազան կողմերում, վորտեղ միայն հայեր են բնակվում» *):

Իրենց հնությամբ առաջին այս թարգմանությունների տպագրման մասին մեղ վոչինչ հայտնի չե: Համենայն գեպս պետք և արձանագրել, վոր Մեմինը յեղել ե Պուշկինի առաջին հայ թարգմանիչը, վոր խախտելով՝ և աղջարյան ճեմարանի անդրջնեղեցան տրաղիցիաները, առանձին ճեմարաքրքրություն և հայտաբերել գեպս յեվոպական և ուսական գրականությունը: Հայտնի յի, վոր Եմինը գեռես Հնդկաստանում սովորել եր անգլիակին լեզուն և լավ ծանոթ եր Շեքսպիրին և Բայրոնին, Վորոնցից նա ցիտատներ և եպիգրաֆներ և բերում իր գրվածքներում: Մոսկվայի համալսարանում Եմինը լսել եր Շեկերյովի Պոգոնյինի հաղեցիքինի գասախոսությունները: Այս յերեքն ել մեծ բանաստեղծի ժամանակակից հայտնի գրողներ և հրապարակախոսներ եյին, վորոնց հետանձնապես ծանոթ եր Պուշկինը: Հատկապես Շեկերյովի մասին, վոր հետևում եր Շեկերյովի իդեալիստական փիլիսոփայության և գրում եր նաև բանաստեղծություններ ու քննադատական հոգվածներ, Պուշկինը գրական կարծիք է հայտնել: Նագեթդինը այդ ժամանակի հայտնի քննադատ եր, «Տելեսկոպ»-ի հրատարակիչը, Մոսկվայի համալսարանի գրականության պրոֆեսորը, Պուշկինի առաջին քննադատներից մեկը: Բնական ե, վոր ուսանող Եմինը կրեր իր պրոֆեսորների աղդեցությունը: «Նա Շեկերյովի առաջնորդությամբ և մեկնությամբ կարուում եր ուսւաց

*) Յերվանդ Շահազիզ, «Մկրտիչ Եմին», Թիֆլիս 1900, էջ 73

գասական հեղինակներին՝ Լոմոնոսովին, Դիլժավիլինին, Ժուկովսկուն և մանավանդ Կարամզինին և Պուշկինին՝ լսելով նրա (Շեքփրյովի (Վ. Թ.) վոգեվորված գասախոսությունները^{1)*}):

Մենք վորեմ գաստական գրավոր տվյալ չունենք այն մասին, վոր Պուշկինը 30-ական թվերին այցելել և լազարյան ճեմարանը ժուկովսկու հետ միասին, ինչպես հաղորդում եւ բանավոր ավանդությունը^{2)**}): Սակայն այդ անհավանական չեւ Մովկա այցելելիս Պուշկինը ներկա յեր լինում համալսարանի գասախոսություններին: Հայտնի յեւ, վոր նա մի ժամանակ հետաքրքրվել է կրթական գործով և նիկոլայ 1-ի պահանջով գրել եւ գեկուցադիր ժողովրդական լուսավորության մասին: Կարելի յեւ յենթադրել, վոր ուսանող Եմինը անձամբ տեսել և Պուշկինին Մովկայում, վորտեղ հաճախ լինում եր բանաստեղծը:

Կա նաև Մ. Եմինի մի վկայութունը (1841 թ.) այն մասին, վոր Լազարյան ճեմարանի ուշակերտները հայոց լեզվի դասերին ժուկովսկու «Ռւնդինայի» հետ միասին թարգմանում եյին Պուշկինի «Ճանապարհորդությունը դեպի Երզրում»-ը: Այս արդեն ցույց է տալիս, վոր ճեմարանի թթուապգասեր կղերամիտ տեսուչ Սալլանթյանի ազդեցությունը հետադայում բավական թուլացել եր և արդեն 1840 թվին ճեմարանի տեսուչ երաժիշտ վուշկիրվում Շեքսպիրի, Բայրոնի և Պուշկինի յերկրագործ յերիտասարդ Մ. Եմինը:

*) Յերանդ Շահապիզ, «Մ. Եմին», էջ 65:

**) Բնկ. Գ. Ավոնյանն այդ լույլ և լազարյան ճեմարանի ուսանողներից:

1843 թվից Եմինին աշակերտած Ա. Պատկանյանն իր մի հիշողության մեջ դրում եւ «Պուշկինի և Լերմոնտովի գրվածքը առաջին անգամ մեզ ծանոթացուց նա Եմինը, Վ. Թ.»: Չատ անդամ հենց յուր դասի միջնորդին ձեռքը առնում եր նոցա շարադրությունները և կարգում եր մեզ համար, և այդ կերպով մեր մեջ սեր և ճաշակ եր ձգում այդ և ուրիշ ուսւ հեղինակների մասին» (ՏԸԸ^{3)*}):

Մ. Եմինն իր աշխարհայացքով քիչ եր տարրերի գրաբարի կողմանակիցներից, և առհասարակ հետագու շրջանում նա յեղել է ըստամենայնի պահպանողական: Սակայն իր յերիտասարդական շրջանում հատկապես դեպի յելքուական և ուսուական գրականությունը հայտաբերած ճեմարաքրությամբ նա մի գլխով բարձր եւ յեղել լազարյան ճեմարանի խավարամիտ բանակից: Մենք հիմքեր ունենք յենթագրելու, վոր նրա տեսչության որով լույս տեսած առաջին թարգմանությունները Պուշկինից և ուսւ այլ բանաստեղծներից արդյունք են նրա ազգեցության և քաջալերանքի:

Մեզ ծանոթ այդ առաջին թարգմանությունները, վորոնք լույս են տեսել Մովկայում Պուշկինի մահից 6 տարի հետո 1843 թվին, պատկանում են Լազարյան ճեմարանի ուսանող Հ. Համազապյանին: Այսպիսով Համազապյանը Պուշկինից կատարված հայերեն թարգմանությունների բիբլիոգրաֆիայի մեջ առայժմ գրավում է առաջին տեղը, մինչև վոր պըտնը վելի վաղագույն թարգմանություններ:

*) «Մերակիչ Եմինի յերկասիրությունները», Մովկա, 1898, էջ 210:

Համազասպյանի մասին մեր ունեցած տեղեկությունները շատ ստկավ են. Յ. Միտնասըյանի «Քնար հայկականից» (1868) հայտնի յե, վոր նա ծնվել և Առողջախանում, սովորել ե Լազարյան ճեմարանում, իսկ հետագայում ծառայել ե իր ծննդավայրում վորպես պիտական պաշտոնյա: Համազասպյանի թարգմանությունների գիրքը հիշատակված ե Պուշկինի յերկերի ոռուսերն բերլինուաֆիայում (1899 թ.): Յու. Վեսելովսկին, հիմնվելով լ. Մակրյանի հազորդած տեղեկության վրա, նույնպես հիշատակում ե այդ ժողովածույթի մասին, վոր այժմ գարձել ե համարյա ունիկում: Մեր հանրային գրագարանում կա այդ գրքի մի որինակը. վերնագիրն ե՝ «Թարգմանութիւնը արձակ և վուտանավոր ի ոռուսաց լեզվէ ի հայբարբառ ի ժուկովսկիյէ, Պուշկինէ, Լեբմոնտովիա, Բարատինսկիու և Գնեղիչէ, Հ. Համազասպեանց: Արգեամբքն և ծախիւք ազնվականի վրաց Մկրտչի Մուրաչեանց, ի Մուսկվ, ի տպագրատան Ճեմարանի տեսարց Լազարեանց, 1843*):

Գրքում զուգահեռաբար տրված ե բոլոր թարգմանությունների ոռուսերն տեքստը: Ժողովածուք մեջ ամենամեծ տեղը գրավում ե Պուշկինը (20 թարգմանություններից 10-ը նրանից են): Մենք կիշատակենք միայն վերջինները: Պուշկինի բանաստեղծու-

*). Նոյնը ուու.—«Переводы в прозе и в стихах с русского на армянский язык с Жуковского, Пушкина, Лермонтова, Баратинского и Гnedича. И. Амазаспова. Издательством грузинского дворянина Никиты Мурачева. Москва, в типографии Лазаревых, института восточных языков, 1843».

Թյառններից թարգմանված են «Ռուսակա» («Русалка»), «Ծով և ցամաք» («Земля и море»), «Ծի տեր ինձ տեր» («Не дай мне бог с'ойти с ума»), «Ծեփ խոնջեալն ուղեվոր» («И путник усталый»), «Ի հրն ավուրս» («С табою дреувели»), «Մարգարե» («Пророк»), «Թաղման յերգ» («Похоронная песня»), «Սոխակ» (և վարդ) («Соловей»), «Ամպ» («Туча»), «Կովկաս» («Кавказ»):

Համազասպյանի թարգմանությունները կատարված են գրաբար լեզվով և մեզ համար այժմ ունենավելի շուտ պատմական նշանակություն: Սակայն չնայած այդ հանգամանքին, նրանք զուրկ չեն գեղարվեստական վորոշ արժեքից, բավական հարազատ են բնագրին: Թարգմանիչն աշխատել ե ըստ հնարագաբին ճշուությամբ տալ Պուշկինի պատկերները, նույնիսկ չափածոյի ութմը՝ հատկապես յամբական վառանավորների մեջ: Չնայած Համազասպյանի գրաբարը խրթին չե, բայց ինչ խոսք, վոր այդ անկենդան լեզվով անհնար եր, տալ Պուշկինի կենդանի և բարսիուն պատկերները, նրա ռեալիստական մեծ ուժը: Մեզ համար այսոր վորպես անախրոնիզմ են հնչում Պուշկինից կատարված գրաբար թարգմանությունները, վորոնց վրա նկատվում ե գրային լեզվի ծանր դրոշմը, վոր սրբանապես խորթ ե մեծ բանաստեղծի ստեղծագործության պայծառ բնույթին: Բայց և այնպես զուտ հետաքրքրության համար կարելի յե բերել մի քանի որինակ Համազասպյանի թարգմանություններից: Համեմատաբար ամենահաջող թարգմանություններից մեկն ե «Մարգարեն»: Ահա մի հատված,

Անմահ աղբերն հոգւով ծարաւ
 թափառեցի յանապատի,
 Այս ինչ սերովքէն ինձ վեցթևան
 Զճանապարհայն յերելեցաւ:
 Զժատում թեթև իբրև զերազ
 Նա մերձեցույց ի յաշըս իմ.
 Յեվ նույն ժամայն բացան իմ աչք
 իբրև արծու դահի հարյալ:

Թարգմանիչը պահպանել ե բնագրի յամբական
 տողերը, հետեաբար և ոիթմը, միայն թարգմանել և
 առանց հանդերի, սակայն այդ թերությունը չի նկատ-
 վում նմանահնչուն վերջավորությունների շնոր-
 հիւ:

Տաղաչափական և ոիթմական հավատարմությամբ
 թարգմանված ե նաև «Կովկասը». Թարգմանչին հա-
 ջողվել ե տալ լեռնային այդ պեյզաժի վեհությունը:

Ընդ ինեւ կովկաս: Միայնակ ի բարձունա
 Առ գահավիժաւ ի վերա ձեանց կանգնիմ:
 Բարձրացեալ հեռավոր ի տեղուցէն արծիվն
 Ավառներ հավասար ընդ իս յանշարժ ի
 թև:

II

1863 թվին «Հյուսիսափայլ»-ում Լերմոնտովի
 «Ֆեռոն»-ի թարգմանության առթիվ տպված խմբա-
 դրական ծանոթության մեջ խմբագրությունը խոս-

տովանում ե, վոր իր համարներում քիչ թարգմանու-
 թյուններ են տպվել ոռուերենից և հոդվածներ չեն
 յեղել ոռու գրականության մասին:

«Հյուսիսափայլ» դա համարում ե կարևոր մի
 բաց, վոր նա «հույս ունի լրացնել ժամանակին, վոր-
 քան հնարավոր ե «Հյուսիսափայլի» կարողության
 համար»: Սակայն հայտնի յն, վոր «Հյուսիսափայլ»
 շուտով փակվեց և չկարողացավ կատարել իր այդ
 խոստումը:

«Հյուսիսափայլի» խմբագրությունը նշում ե, վոր
 Լերմոնտովը «Պուշկինի հավասարակշնորհ հաջորդը,
 կամ մանավանդ նրա վաստակակիցն ե»: Իսկ հզ և
 Լերմոնտովը «Հյուսիսափայլի» համար: Լերմոնտովի
 բանաստեղծական պաշտոնը (այսինքն՝ գործը, դերը,
 Վ. Թ.) մի ազատ, առանձնավոր բարձրագահ հոգու
 պատերազմն եր ընդունելու մի տօնդանի ինքնակալա-
 րյան... այս ազատազգյաց ոռուի հուսահատությու-
 նը դեմ հանդիման ցարի բանակալարյանը (Ընդգծ. մերն
 ե, Վ. Թ.) եր արգարացի և հիմնավոր, քան թե անգո-
 լիական լորդի (այսինքն՝ Բայրոնի, Վ. Թ.) հուսա-
 հատությունը դեմ հանդիման յուր աշխարհի վորպե-
 սությանը»:

Այնուհետև «Հյուսիսափայլ» զուգահեռ և անց-
 կացնում Պուշկինի և Լերմոնտովի միջև: «Ինչպես սա
 (Պուշկինը) իր «Յեվգենիյ Ռեգին» բանաստեղծու-
 թյան մեջ մարգարեյաբար զուշակել եր իր մահվան
 կերպը, այնպես ել Լերմոնտովը իր ոռուանի մեջ՝ «Հե-
 րոս մեր ժամանակի»: Լերմոնտովը հազիվ 27 տարե-
 կան մեռավ կովկասում, ուր աքսորված եր նա այն

վրեժինդիր տաղերգության համար, վոր հնչեցրել եր
Պուշկինի գերեզմանի վրա*):

Մ. Նալբանդյանը գեռես 50-ական թվերին
թարգմանել եր մի հատված Պուշկինի «Եղիկասյան
դերին» պոեմից («Չերքեզի լերգը») և Պուշկինի հե-
տեւ վողությամբ գրել ե «Բանաստեղծը»: Այսուհետեւ նրա
քաղաքական խռովահույզ, բայց կարճատես կյանքը
և նարավորություն չտվեց նրան սիստեմատիկ կերպով
զբաղվելու գրականությամբ, սակայն նույնիսկ բան-
առում նա չեր մոռացել Պուշկինին. բանտից գրած իր
նամակներից մեկում նալբանդյանը հիշատակում է
մեծ բանաստեղծի անունը**):

Մենք ունենք 60-ական թվերի խոշորագույն
հայ պոետներից մեկի՝ Մ. Շահաղիզի վկայությունը
Պուշկինի և Լերմոնտովի պոեզիայի նշանակության
և իր վրա գործած ազդեցության մասին: Յու. Վեսե-
լյովսկուն ուղղած իր՝ նամակում Մ. Շահաղիզը գրում
է.

«Իուս պոետներից ինձ վրա ամենաուժեղ տպա-
վորությունը գործել են Պուշկինը և Լերմոնտովը: Պուշ-
կինը միշտ ինձ գրավել ե նախևառաջ վորպես բազ-
մակողմանի և ճշմարտացի պոետ, արվեստագետ, փո-
րի ստեղծագործությունը զգայուն ընթերցողի համար
ներկայացնում ե ասես զմայլելի ծաղկափթիթ մի

*) «Հյուսիսաֆայլ», 1864 դեկտ.

**) 1863 թ. մարտի 2-ին Կետրուպավլովսկի բերդից գրած
մի նամակում Մ. Նալբանդյանն ի միջի այլոց առում ե. «Այժմ
գժմարանում եմ կարգալ այնպիսի գրքեր, վորոնք իմիւսոփարա-
կան յերկերի դեր խաղալու հավակնություն են ցույց տալիս,
այդպիսիներից յսո խուսափում եմ, ինչպես Պուշկինը սեմինարիստ-
ներից» (տես «Դիվան Միքայել նալբանդյանի», եջ 268):

պարտեզ, վորը շողովում և դրախտային գեղեցկու-
թյամբ . . .»:

«Երա պոելիայի, մասնավորապես «Ենգենիյ
Ոնեգինի» (վորոշ չափով նույնիսկ «Գրաֆ Նուլինի»)՝
ազգեցության հետքերը տեղատեղ նկատելի յեն իմ
«Լեվոնի վշտի» մեջ: Բացի այդ, յս մի ժամանակ
մտահղացել և սկսել ելի զբել հայկական նոր կյանքից
առնվագի թեմայով մի պոեմ, վորը կհանդիսանար մա-
սմար նմանություն «Յեվգենիյ Ոնեգին»-ի, հատկապես
պումի վիպական հանգույցին: Տատյանայի պատմու-
թյանը: Դրանից առաջ իմ «Ազատության ժամեր»-ում*)
թյանը: Դրանից առաջ իմ «Ազատության ժամեր»-ում*)
յս արդին փորձել եմ իմ կարողության չափով
յս արդին փորձել եմ իմ կարողության չափով
նմանվել Պուշկինին—թարգմանել եմ նրա «Հվօնօ
նատարհայ», վորոշ դեպքերում նրա առանձին բանաս-
յանական պուտելիուններից եպիգրաֆներ եմ վերցրել իմ սե-
տեղություններից եպիգրաֆներ իմ վերցրել իմ սե-
տեղությունների համար, վորոնք գրված են յեղել
նրա ազգեցությամբ»**):

Պուշկինի ազգեցությունը Շահաղիզի հայտնի
պոեմի վրա գլխավորապես յեղել ե գեղարվեստական
ձևի տեսակետից: Շահաղիզն իր այդ պոեմում համախ-
միեմատիկ ե և վերացական, ավելի շատ ճառում ե
քան պատկերում, սակայն, անկասկած, նա զգացել ե
նրան Կուպրինի Պուշկինի ռեալիստական հանճարի գեղար-
ըւրունել ե Պուշկինի ռեալիստական հանճարի գեղար-
ըւրունել ե Պուշկինի ռեալիստական հանճարի գեղար-
ըւրունել ե Պուշկինի ռեալիստական հանճարի գեղար-

*) Մ. Շահաղիզի բանաստեղծությունների առաջին ժողո-
վածուն, Մոսկվա, 1858 թ.:

**) Ю. Веселовский, «Русское влияние в армянской
литературе», 1909 թ., բերում ենք թարգմանաբար:

Նրա սառնությունը, տաղոռուկը աշխարհիկ կյանքից,
հիմաթափությունը և հպարտ տիրությունը—

— Լեզոն տիրուր եր, զբջում եր մենակ

Սիրուր ձնում եր վիշտ և տաղակություն...

Լեզոնն Ոնեգինի պես զնում և ճանապարհորդել
դեպի հարավ՝

Սիրած գրքերից մեծ պաշար տուած—

Տիրուր մեզեզիք Հեյնե պոետի,

Գոռակի Ֆաուստ, այս անմահ քերթված,

Թափառաշրջիկ վեպը Զայլը Հարուրի.

Յերգիծանիչ գործը Յորենալի,

Յեկ Բեռանժեյի գորկից յերգեր,

Յեկ պատմությունը լրջամիտ Բոկլի

Յեկ Շեքսպիրի վողբերգություններ...

Դրքերի արա հիշատակությունները հիշեցնում են
«Յեվկենիյ Ոնեգինի» և «Գրաֆ Նուլինի» համապատասխան տեղերը:

Զայլը Հարուրի մասին քանիցո հիշատակվում է
Պուշկինի պոեմում, իսկ Ոնեգինի սիրած գրքի մասին
խոսվում է պոեմի յոթերորդ գլուխում: «Գրաֆ
Նուլինի» մեջ հերոսը Պետերուրի և գնում—

С ужасной книжкой Гизота,

С тетрадью злых карикатур,

С романом новым Вальтер-Скотта

.....

С последней песней Беранжера*).

*.) Գիլուար սարսափելի գրքով, չար ծաղրանկարների տեսքով, Վալեր-Սկոտամբնոր վեպով... Բերանժեյի վերջին յերգով:

Ինչպես տեսնում ենք, «Գրաֆ Նուլինի» աղջեցությունը «Լիվոնի վշտի» վրա սոսկ ձևական ե, ավելի ուժեղ և «Յեվկենիյ Ոնեգինի» աղջեցությունը հատկապես Շահազդիղի հերոսի ընավորության վորոշ գծերի պատկերացման մեջ: Ինչ խոսք, վոր իր իգեայով և բովանդակությամբ «Լիվոնի վիշտը» միանգամայն տարբեր և «Յեվկենիյ Ոնեգինից»: Այստեղ կարելի յե նշել միայն, վոր Լեվոնն իր բնավորությամբ Զայլը Հարուրի և Ոնեգինի մի տեսակ անհաջող խառնուրդն ե:

Պուշկինի ունեղծագործությամբ առանձնապես հետաքրքրվել են զրիմցի հայ մտավորականները: «Բախչիսարայի շատրվանի» մեզ հայտնի առաջին աշխարհաբար թարգմանությունը տպագրվել և թերգուսիայում լույս տեսնող «Բաստիարակ» ամսագրում 1873 թվին: Դեռևս գրանից առաջ, Լազարյան ճեմարանի նախկին ուսանող Սարգիս Խորասանյանը, Մ. Եմինի գայընկերը, Ղրիմի բարբառով թարգմանել և «Բորիս Գոլունովի» մի քանի հատվածները: Մի ուրիշ զրիմցի՝ Բ. Քուշներյանը (1841—1891), 70—80-ական թվերին թարգմանել Պուշկինի մի քանի բանաստեղծությունները, ինչպես և «Ճանապարհորդություն գեղագիտությունները», վորոշ կրծատումներով. սա նույնպես պի Երվանդուր, վորոշ կրծատումներով. սա նույնպես այդ գրվածքի առաջին մեզ հայտնի աշխարհաբար թարգմանություններ, վոր տպված ե Վենետիկի «Բաղմագիպում» 1883 թվին:

Մեղ համար վորոշ հետաքրքրություն կարող է ներկայացնել «Բախչիսարայի շատրվանի» թարգմանությունը «Թաստիքարակ» ամսագրում։ Այդ թարգմանությանը կցված ծանոթության մեջ ամսագրի խմբագրությունը գրում ե. «Ծուռաց աշխարհաքարող և առաջին գերանոցակ քնարերգակ բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինի անվանի գրածքներեն մեկն և «Եաչուրայսկի Փոհտահ», վորի թարգմանությունը կդնենք այստեղ ի վայելս մեր բանասիրաց*):

Դրիմի մասին խոսելիս չի կարելի չնշել թեև դա անմիջականորեն չի վերաբերում մեր նյութին, դրիմցի հոչակավոր ծովանկարիչ Հովհ. Այվազովսկու այնպիսի նկարները, ինչպես «Պուշկինը Դրիմում», «Պուշկինը Դրիմի հարավային ծովափում», «Պուշկինը Այգետարի լեռան վրա», «Պուշկինը Այու Դադի ժայռերում» և մեծ Ռեպինի հետ միասին նկարած «Մնաւ բարեկ, ազատ տարերք» հոյակապ նկարը**), վորի մեջ բանաստեղծի ֆիգուրան պատկանում է Ռեպինի, իսկ ծովային պեյզաժը Այվազովսկու վրձինին։ Դրիմցիք կարծես իրենց յերախտագիտական պարտքն եյթն կատարում դեպի հանճարեղ պոետը, վոր իր յերկերում անմահացրել են նրանց ծննդավայրը։

Մեր նպատակը չե մեկ առ մեկ թվել բոլոր թարգմանությունները՝ սկսած հնագույններից սինչե վերջինները՝ Պուշկինի յերկերի հայերեն թարգմանու-

*) «Թատիքարակ», ամսագիր պատկերագր, 1873 թ. 5, թողոքիա, հայոց սեմինարիայի տպարանում։

**) Այս նկարները զետեղված են Վենդերովի իմբագրությամբ լույս տեսած հարավակության մեջ։

Թյունների մանրամասն բիբլիոգրաֆիան, վոր բույս կտեսնի բանաստեղծի մահվան հարյուրամյակի տաթիվ, հետաքրքիր ընթերցողին իրազեկ կդարձնեմինչե այժմ հայտաբերված բոլոր թարգմանությունների մասին։ Հայտնի յե, վոր դեռևս 1850 թ. Թիֆլիսի «Արարատ» հանդիսում տպագրված ե Պուշկինի «Թուչնակը» գրաբար թարգմանությամբ, իսկ 1858 թվին «Մեղու Հայաստան»-ում «Վոսկի ձկնիկ» հեքիաթը, վորի կլասիկ թարգմանությունը պատկառնում ե Դ. Աղայանին (1884 թ.): Պուշկինից թարգմանություններ են տպված նաև «Կոռլոնկ» ամսագրում (60-ական թվերին): «Մեղու Հայաստանի» ամսագրում կա «Ժլատ ասպետ»-ի թարգմանությունը (1867):

Վորպես թարգմանական նշանակելի գործ կարելի յե հիշատակել «Գնչուներ» պոեմի թարգմանությունը, վոր կատարել ե Գեվորգ Ասատուրը 80-ական թվերին։ Գեվորգ Ասատուրը թարգմանել ե նաև «Յեթիպտական գիշերների» իմպրովիզացիան։ Այս թարգմանությունները տպված են «Տարագ»-ում։

Հետաքրքրական ե նշել բանաստեղծությունների մի հազվագյուտ ժողովածու, տպված Շուշում 1881 թվին, վորը մինչե այժմ գրեթե անհայտ չունեցած ե յեղել։ Այս ժողովածուի մեջ ամփոփված են ինքնուրույն և թարգմանական բանաստեղծություններ Բայրոնից, Պուշկինից, Լեբմոնտովից, Շախմեյբայց, Շիլլերից, Դոբրոլյուսովից և այլն։ Պուշկինից, թարգմանված ե «Բանաստեղծը» գրաբարակինից թարգմանված ե «Բանաստեղծը» գրաբարակինից թարգմանաստեղծությունների թարգմանուն հայերենով։ բանաստեղծությունների թարգմա-

նիշն ե մեզ անհայտ Նիկ. Տեր-Ավետիքյանը, վորի պուտական ջնորհքը բավական կասկածելի յեւ Այնուամենայնիվ ուշագրավ ե այս ժողովածուն վորպես իր ժամանակի գրական լեռնեույթ։ Բանաստեղծությունների թվում կա մի ձո՞ն, ուղղված Պուշկինին՝ բանաստեղծի արձանի բացման առթիվ։ Բանաստեղծությունը գրված ե Մոսկվայում, 1880 թ. հուլիսի 6-ին։ Չոնը կրում է «Պուշկինի արձանը» վերնագիրը։ Հայ բանաստեղծը Պուշկինին բնութագրում և վորպես «աւդատության արուսյակ հայրենի աշխարհին» և դիմելով նրան՝ ասում ե.

Ուրախացիր ով հանձար,
Ահեղազոր են խոսքերդ,
Ազնիվ դարձան սրտերը քար
Յեվ ծաղկեցան քո փշերդ . . .

Եռւշեցի բանաստեղծը «Ազնիվ դարձան սրտերը քար» բաներով թերևս ուզում ե ընդգծել Պուշկինի հանձարի ուժը, վորն ըստ հեղինակի «աղնվացնում և սրտերը», սակայն խիստ բնորոշ ե այն, վոր հայ տառաչափը գեռես 80-ական թվերին հանձին Պուշկինի վոզդունում ե «ազատության արուսյակը»։

Նմուշի համար բերում ենք «Բանաստեղծ»-ի թարգմանության առաջին յերկու տողը։

Մինչ վոչ ի զո՞ն նվիրակոն
Կանչէ զպոետ Ապոլոն . . .

Пока не требует поэта
К священной жертве Аполлон . . .

80-ական թվերին գրական ասպարեզ ե մտնում խոշոր լերիկ Հովհաննիսյանը, վոր Լազարյան ձեմարանում աշակերտել եր Ս. Շահազիդին։ Ահա ինչ ե գրում նա Պուշկինի մասին, պատասխանելով Յու. Վեսելյովսկու նույն անկետային։

«Անձնապես իմ մասին կարող եմ հայտնել, վոր թեև ինձ վրա ուժեղ տպավորություն գործող առաջին պոետները լեղել են Բայրոնը և Հայնեն, սակայն հետո յես շատ սիրեցի Պուշկինին և Լերմոնտովին։ «Յելլենի Ռնեգինի» նմանողությամբ, դեռևս Լազարյան ձեմարանի աշակերտ յեղած ժամանակ, յես գրել եմ մի մարդող պոեմ (վորը, իհարկե, յերբեք տպագրված չե) . . . Պուշկինից յես թարգմանել եմ մի քանի բանաստեղծություններ, վորոնք տպագրված են 1899 թ. հորելյանական ժողովածուի և «Տարազ» պատկերազարդ հանդեսի մեջ։

90-ական թվերի հայանի բանաստեղծ և դրամատուրգ Լեվոն Մանվելյանը, վոր միաժամանակ հանձես եր գալիս վորպես գրական քննադատ, Պուշկինի պոեզիայի իր վրա գործած ազդեցության մասին գրում ե հետեւյալը։

«Գիմնազիայում (4—5-րդ դասարաններում) յես հավիտակությամբ կարդում եյի Պուշկինի և Լերմոնտովի բանաստեղծություններից շատերը, պոեմներից լավագույն հատվածները, «Բորիս Գուրոնով»-ի ամելող տեսարաններ յես անգիր գիտեյի։ Դեպի պոեզիան ունեցած իմ սերը և գեղարվեստական ձևակը յես ունեցած իմ սերը և գեղարվեստական ձևակը յես պարտական եմ մասամբ Պուշկինին և Լերմոնտովին։ Թերևս Պուշկինի դբամատիկական տեսարանները

(«տեսարան ֆառուստից», «Մոցարտ և Սալյերի») աղ-
դեցությունն են գործել իմ գրական սիրած ձեմ՝ գրա-
մատիկական պոեմի վրա . . .»:

Լ. Մանվելյանի այս վկայությունն ունի գրա-
կան-պատմական կարևոր նշանակություն: Հայտնի
յն, վոր հայ գրականության մեջ Լ. Մանվելյանը
գրեթե միակն ե, զոր վորոշ հաջողությամբ մշակել ե
գրամատիկական պատմի ժանրը («Փոթորիկը» և այլն)
ե, ինչպես խոստովանում ե ինքը, այդ պարտական ե
Պուշկինին:

Լ. Մանվելյանը թարգմանել ե Պուշկինի «Մար-
դարեն», վոր կարելի յե համարել համեմատաբար
բավական հարազատ բնագրին: Նկատի ունենալով
Պուշկինի այդ նշանավոր բանաստեղծությունը թարգ-
մանելու դժվարությունը և այն, վոր Լ. Մանվելյա-
նի այդ թարգմանությունը հայտնի չե ընթեր-
ցողների լայն շրջանին, ավելորդ չենք համարում բե-
րել այն այտաեղ:

ՄԱՐԴԱՐԵՆ*)

Հոգով ծարավի վերածնության
Դեղներում եյի մոայլ անտպատում,

*) Հայտնի յե, վոր Պուշկինը մարգարելի պատկերն ոպտա-
գործել ե այլարանական իմաստով. նույն վերնադով մի այլ
բանաստեղծություն, վոր մեզ չի հասել, մեծ բանաստեղծը նվե-
րել ե գելաբրիստների ապստամբությանը: Մարգարեն՝ դա բա-
նաստեղծն ե, վոր հեղափոխական խոսքով այրում ե մարդկանց
սրբերը: Բանաստեղծությունը գրված ե 1825 թ. գեկտեմբերի
14-ի գետքերից հետո, 1826 թվին, գեկտերիստների ալ տամա-
կան յելույթի պարագաներության ուժեղ տպակորության տակ ե գոյ
մի ընդհանուր բան չունի աստվածաշնչի մարգարեյական քա-
ռութիւն:

Յեվ մի սերովբե ահա վեցթեյան
Հանկարծ յերեաց իմ ճանապարհում:
Մատներով թեթև յերազի նման
Անցավ իմ պըղտող բիբերի վրան,—
Յեվ լայն բացիցեցան իմտստուն բիբեր,
Ինչպես վախեցած արծվի աչքեր:
Իմ ականջներին նա թեթեվ դիպավ
Յեվ լցրեց ժխոր և ձայներ ամբավ,
Յեվ լես լսեցի յերկնի յերերում,
Յեվ վերին թըռիչը սուրբ վոգիների,
Յեվ սողունների շարժումը ծովում,
Յեվ հովիտներում փըթթելը վորթի:
Յեվ իմ բերանին մերձեցավ հըպեց
Յեվ մեղսոտ լեզուս տրմատից պոկեց,
Իմ դատարկախոս լեզուն նենգավոր,
Յեվ իմ բերանում մեռյալ ու սառած՝
Դըրեց իմաստուն ոձի խայթ հըպոր
Նա իր աշ ձեռքով՝ արյունով ներկված,
Յեվ նա իմ կուրճքը սրով պատառեց
Յեվ հանեց սիրտս դողդոջ ու տկար՝
Յեվ իմ պատռված կրծքի մեջ զրեց
Արտի փոխարեն կրակ բոցավառ:
Անսպատի մեջ լուռ, գիտկի պես
Ընկած եյի յես, — և ասաց ինձ տեր,
«Յելիր մարդարե, և լաիր, և տես.
Իմ կամքը թող քեզ լինի քաջալեր,
Յեվ ծով ու ցամաք շընագայիլով,
Մարդկանց սրտերը բուրովիր խոսքով»:

Բնորոշ ե, վոր Մանվելյանը բոլորովին խուսափել ե գրաբարից, վորը, վոմանց կարծիքով, իբր թե անհրաժեշտ ե ոդտագործել Պուշկինի բնագրի կողորիտը տալու համար: Մանվելյանն այդ արել ե առանց գրաբարի ոգնության և, ոնկասկած, հասել ե շատ ավելի մեծ արդյունքի:

90-ական թվերից սկսած Պուշկինի յերկերի թարգմանությունները յերեսում են «Մուրճ» ամսադրում, վորի համարներում տպագրվում են Պուշկինի խոշոր յերկերից «Պոլտավա»-ն, «Ժլատ ասպետը», «Ավազակ յեղբայրներ»*), Ալեքսանդր Շատուրյանի բազմաթիվ թարգմանությունները (լիրիկական թարգմանություններ), վորոնք հետագայում հրատարակվում են առանձին գրքով: «Կապիտանի աղջիկ» վեպի թարգմանությունը (թարգմանիչ՝ Հարություն Կարապետյան) լույս ե տեսնում 1895 թվին Ալեքսանդրապուրմ (Լենինսկական):

Վրա յե հասնում Պուշկինի ծննդյան հարյուրամյակը 1899 թվին: Գետք ե ասել, վոր ժամանակի հայ մամուլը լայն կերպով արձագանքում ե մեծ բանաստեղծի տարեգարձին: Պարբերական թերթերում ե հանդեսներում («Մշակ», «Մուրճ», «Տարագ» և այլն) լույս են տեսնում հոդվածներ՝ նվիրված Պուշկինին: «Տարագը» հրատարակում ե հատուկ հոբելյանական պատկերագրեակել համար: Լույս են տեսնում Հովհ. Թումանյանի թարգմանած «Զրահնեղձը», «Ռիգի յերգը», Բացի լրագրական հոդվածներից ու առանձին թարգմանություններից, Պուշկինի ծննդյան հարյուրամյակի առթիվ լույս են տեսնում Պուշկինի յերկերի հա-

*) Այս յերեք պոեմներն ել թարգմանել է Հ. Տել-Գեվորգյանը:

տուկ ժողովածուներ թրիլիսիում և Բագրիում: Նույն թվին առանձին գրքով հրատարակվում ե ամեն Ստելիսիյանի գիրքը՝ «Պուշկին», նրա կյանքը և գործունելությունը: Առանձնապես պնտիատելի աշխատանք ե կատարում բանաստեղծ Ալ. Շատուրյանը, վոր բացի թարգմանություններից՝ պուշկինյան տոնակատարությունների առթիվ հոդվածները ե գրում «Մուրճ»-ում և «Մշակ»-ում: Այդ հոդվածներից մեկում Շատուրյանը գրում ե. «Հանձինս Պուշկինի այսոր գրիշը տանում ե իր փառավոր հաղթանակը մի բազմամիլիոն ազգի մեջ: Պատիվ այն ժողովրդին, վոր ընդունակ ե հաղթվելու դրչից ուժից, ընդունակ ե վողեվորդիլու սրաի խոսքով, ընդունակ ե գլուխ խոնարհել բարձր տաղանդի առաջ»:

Պուշկինի դրամատիկական յերկերից Կ. Կրասիլնիկյանը թարգմանել է «Բարե հյուր»-ը 1899 թ.**) և «Հավերժմահարսը», վորն առանձին լույս ե տեսել 1902 թ.: «Հավերժմահարսի» թարգմանությունը պետք է համարել բավական հաջող: Կրասիլնիկյանը թարգմանել է ամբողջությամբ «Բորիս Գոդունովը», վոր գեռս անտիպ ե:

Ալ. Շատուրյան առանձին յերախտիք ունի Պուշկինի գլխավոր լիրիկական բանաստեղծությունների թարգմանության գործում: Առաջին անգամ նա յեր հայ ընթերցողին ծանոթացրեց Պուշկինի այնանա յեր հայութեական բանաստեղծությունների հետ, պիսի հեղափոխական բանաստեղծությունների հետ, ինչպես «Գյուղը», «Կալանավորը», «Զաաղակին»: Վեր-

*) Լույս ե տեսել «Քնար Ա. Պուշկինի» ժողովածուք մեջ՝ հրատարակված Բագրիում:

Հին բանաստեղծությունը՝ Ծատուրյանի թարգմանության մեջ կը ում և «Նուա անցան» վերնագիրը:

Մենք յերկարո՞ւն կանգ չենք առնում այն ագուցության վրա, վոր գործել են ոուս մեծ պոետները՝ հատկապես Պուշկինը և Լերմոնտովը հայ բանաստեղծների վրա: Մեր գրականության և մամուլի մեջ բավականաշափ խոսված են հայ մեծագույն բանաստեղծ Հ. Թումանյանի Պուշկինից կատարած սքանչելի թարգմանությունների մասին և հատկապես ընդգծված են նրա մեծարանքն ու հիմքմունքը Պուշկինի հանդեպ: Այս հարցի մանրամասն լուսաբանությունը կազմում է մեր գրականության կարևոր պրոբլեմներից մեկը: Մեր գրականության խոշորագույն ներկայացուցչի ծանրակշիռ խոսքը ունի հսկայական նշանակություն: Թումանյանն ամենայն իրավամբ կարող եր խոսել մի ամբողջ գրականության անունից: Հանձին ոուս հանճարեղ պոետների, Պուշկինի և Լերմոնտովի՝ նա գտել եր իրեն առավելապես մոտիկ և հարազատ հոգիներ, խորապես ըմբռնել Պուշկինի ստեղծագործության ոեալիստական, ժողովրդական եյությունը, նրա կլասիկ պարզության վեհությունը, պահծառ իմաստությունը:

Պուշկինը մտնում է ազգային գրականությունների մեջ գորպես իրավագոր, սիրելի և հարազատ կլասիկ՝ համաշխարհային գրականության մյուս հըսկաների հետ միասին: Յեվս ավելի թանգ ենա վորպես մեր մեծ հայրենիքի պանծալի զավակը, վոր անմիջականորեն կապված ե յեղել նրա բոլոր ժողովուրդների կյանքի հետ, իր յերկերում պատկերել ե այդ կյանքը, այն ժողովուրդների կյանքը, վորոնք այսոր կազմում են սոցիալիստական մեծ Հայրենիքը—Խորհրդակային Միությունը:

Տե՛ս. Խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սբբագրել Վ. Ավագյան
Կոնտրոլ սբբագրել Խ. Այվազյան
Գլավիտի լիազոր Խ-9308
Հրատ. № 4284, արթաժ 3000, պատվեր № 727
Հանձնվել ե արտադրության 1937 թ. սեպտ. 13-ին
Ստորագրել ե տպագրության 1937 թ. հոկտ. 22-ին

Գետհատի 2-րդ տպարան, Յերևան, Նալբանդյան, 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0325047

ԳԻԱ 1 Ռ. 60 ԿՈՊ.

В. ТЕРЗИБАШЯН
ПУШКИН И ВОСТОК

ГИЗ Арм. ССР, Ереван, 1987 թ.